Azg
Ազգ
25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1998 ՈՒՐԲԱԹ # 178 (1681)

# Նյու Յորքում Քոչարյանը կհանդիպի նաեւ Նաթանյահուի հետ

ՆՅՈՒ ՅՈՐՔ, ՄԱԿԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅԱՆ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի տարեկան նիստին մասնակցելու եւ ելույթ ունենալու համար նախորդ օրն իր տիկնոջ եւ արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ Նյու Յորք ժամանած նախագահ Ռոբերտ Քոչարյանը մի շարք հանդիպումներ է ունենալու այլ երկրների ղեկավարների հետ, այդ թվում, ինչպես տեղեկացրեց մեր թղթակցին օտարերկրյա դիվանագետներից մեկը, Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի հետ:

Նախագահ Քոչարյանը երեկ Նյու Յորքի Marriott Marquise հյուրանոցի դահլիճում հրատարակային հանդիպում ունեցավ ամերիկահայ համայնքի, իսկ ավելի ուշ համայնքի ներկայացուցչական դեմքերի հետ: Իսկ այսօր, երեւանի ժամանակով ժամը 19.00-ին, Հայաստանի նախագահը ճառ կարտասանի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջ: Հիշեցնենք, որ Գլխավոր ասամբլեայի ներկա նիստի օրակարգի գլխավոր հարցերից մեկը նվիրված է ժողովուրդների ինքնորոշման իրավունքին:

ԲՐՅՈՒՍԵԼ

# ՆԱՏՕ-ն շահագրգռված է Անդրկովկասի երկրների հետ առավել սերտ գործակցությամբ

*Այցի նախօրեին ընդգծեց Խավիեր Սոլանան*

ԲՐՅՈՒՍԵԼ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՆԱՐ. «Իմ այցը Հայաստան, Ադրբեջան, Վրաստան եւ Մոլդովա կոչված է կրկին ընդգծելու Հյուսիսատլանտյան դաշինքի հետաքրքրությունը տարածաշրջանի պետությունների հետ համագործակցության նկատմամբ, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի եւ այդ երկրների միջեւ առավել սերտ գործակցություն հաստատելու շահագրգռությունը»: Այսպես բնութագրեց սեպտեմբերի վերջին-հոկտեմբերի սկզբին անդրկովկասյան երկրներ եւ Մոլդովա կատարելիք իր շրջագայության հիմնական նպատակը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան օրերս Բրյուսելում Մոլդովայի, Վրաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի լրագրողների հետ կայացած հանդիպման ժամանակ:

Խոսելով այդ երկրների եւ ՆԱՏՕ-ի միջեւ ձեւավորված երկկողմ փոխհարաբերությունների մասին, Սոլանան դրական, «բավականին լավ» եւ զարգացմանը միտված» անվանեց, հատկապես նշելով փոխհարաբերությունների զարգացման հեռանկարները «Գործակցություն հանուն խաղաղության» եւ Եվրաատլանտյան գործակցության խորհրդի ծրագրի շրջանակներում: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարն ընդգծեց, որ բոլոր չորս պետությունները, որոնք իմը մշտապես է այցելել, բավականին ակտիվորեն համագործակցում են Դաշինքի հետ, ընդսմին նշելով Մոլդովայի եւ Ադրբեջանի մասնակցությունը ՆԱՏՕ-ի ծրագրերի եւ գործողությունների պլանավորման ու վերլուծության գործընթացին:

«Ես հավատացած եմ, որ իմ ուղեւորությունը բավականին արդյունավետ կլինի», հայտարարեց Սոլանան, ընդգծելով, որ իր այցի շրջանակներում կքննարկվեն ՆԱՏՕ-ի եւ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի ու Մոլդովայի առավել սերտ երկկողմ համագործակցության սահմանները, ինչպես նաեւ 1999 թ. ապրիլին Վաշինգտոնում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովի հետ կապված հարցեր:

«Գործակցություն հանուն խաղաղության» ծրագիրը կոչված է նպաստելու երկկողմ եւ բազմակողմ գործակցային փոխհարաբերությունների հաստատմանը ինչպես ծրագրի մասնակիցների, այնպես էլ հենց գործակիցների միջեւ», հայտարարեց Խավիեր Սոլանան, պատասխանելով «Սնարֆ» գործակալության թղթակցի հարցին, թե Հայաստանի եւ Թուրքիայի փոխհարաբերությունների չկարգավորվածությունը, մասնավորապես, Անկարայի միակողմանի հրաժարումը Երեւանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց չի՞ խոչընդոտում արդյոք Հայաստանի եւ ՆԱՏՕ-ի հարաբերությունների հետագա խորացմանը:

Նշելով, որ իմը չի ուզում միջամտել երկու ինքնիշխան երկրների ներքին գործերին, Սոլանան միեւնույն ժամանակ ընդգծեց, որ ՆԱՏՕ-ն «Գործակցության» շրջանակներում փորձում է բարենպաստ մթնոլորտ ստեղծել Թուրքիայի եւ Հայաստանի փոխհարաբերությունները բարելավելու համար:

Սոլանայի խոսքերով, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի եւ ՆԱՏՕ-ի (մասնավորապես, Եվրաատլանտյան գործակցության խորհրդի) հարաբերությունները ի զորու է իրական ավանդ ներդնել եվրասիական տարածաշրջանի տարբեր հիմնախնդիրների, այդ թվում Կովկասի հակամարտությունների կարգավորման գործում:

ՕՐԱԳԻՐ

# Ընդունելություն ի պատիվ կոնգրեսական Բենջամին Գիլմանի

Հայաստանի անկախության 7-րդ տարեդարձի առթիվ Ռամկավար Ազատական կուսակցության Հայկական ազգային ազատագրական կազմակերպությունը հոկտեմբերի 3-ին Չիկագոյում կազմակերպելու է ընդունելություն ի պատիվ կոնգրեսական Բենջամին Գիլմանի, որ նախագահն է Ս. Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին գործերի հանձնաժողովի: ՀԲԸՄիության Օմիկ Նորհաս կենտրոնի դահլիճում տեղի ունենալիք հանդիսության պատվո հյուրերն են լինելու նաեւ կոնգրեսական Ջոզեֆ Նայնբերգը (Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ, որ սեպտեմբերի 16-ին մեծ նպաստ է ունեցել թիվ 907 օրինագծի պատրաստման գործում), Ներկայացուցիչների պալատի անդամ, հայտնի հայասեր Ջոն Պորտերը եւ տիկինը՝ Կատրինը: Ներկա է լինելու նաեւ Խաժակ արք. Պարսամյանը, իսկ գլխավոր բանախոսն է Հայկական համագումարի գործադիր տնօրեն Ռոս Վարդյանը:

Կոնգրեսական Գիլմանն անցնող 20 տարիների ընթացքում Կոնգրեսում հաճախ է պատրաստել հայկական բիլեր: Նրա նման ազդեցիկ հայտարկան գործչի բարեկամությունն ու գործակցությունը խիստ կարեւոր է հայկական շահերի տեսակետից:

# Բախվում անհանգստացած են հայ-ռուսական զորավարժություններից

ՄՈՍԿՎԱ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Հայաստանի Արմավիրի մարզում այսօր սկսված հայ-ռուսական համատեղ համազորային մարտավարական զորավարժությունները անհանգստություն են հարուցել Ադրբեջանում: Ադրբեջանի արտաքին հարաբերությունների հարցերով պետխորհրդական Վաֆա Գուլուզադեն ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտարարել է, թե «այդ անհանգստությունը կապված է այն բանի հետ, որ հայ-ռուսական համատեղ զորավարժությունները բարձրացնում են Հայաստանի գինված ուժերի մարտունակությունը, մի պետություն, որի հետ Ադրբեջանը փաստորեն պատերազմական վիճակի մեջ է, չնայած ավելի քան 4 տարի պահպանվող զինադադարի ռեժիմին»: Նրա խոսքերով, «անհանգստացնում է այն, որ Լեռնային Ղարաբաղի խնդրով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ռուսաստանը միաժամանակ դարձել է նաեւ Հայաստանի ռազմական դաշնակիցը»: Այդ դաշինքի կնքումն այն ժամանակ, երբ դեռեւս կարգավորված չէ հայ-ադրբեջանական հակամարտությունը, Գուլուզադեն խիստ անցանկալի է համարում:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

# Ֆրանսիայի ասպետի կոչում Մանսուր Օհան Դուրյանին

Երեկ Ֆրանսիայի դեսպանատանը հրավիրված էին տեր եւ տիկին Օհան եւ Ալիս Դուրյաններ, Հայաստանում ֆրանսիական դեսպան Միշել Լեգրան, «Ֆրանսիայի կառավարության կողմից մանսուր Օհան Դուրյանին շնորհել է արվեստի եւ գրականության ասպետի կոչում եւ արտաքին գործերի նախարարությունը մեծ ուրախություն է Ֆրանսիայի դեսպանատան, եւ հատկապես ինձ համար, հանձնելու այս մեծ շքանշանը, որը հուլիսի 14-ին մեզ որոշեցինք շնորհել հարգարժան մանսուրին: Այդ շքանշանը Ֆրանսիայի կառավարության յուր ամենագլխավոր դարգեւներից մեկն է եւ հանձնվում է ամենայն անձերի, որոնք Ֆրանսիայի մշակույթի համար եւ ընդհանրապես Ֆրանսիայում մեծ դեր են խաղում արվեստի ու գրականության բնագավառում»: Արտիստին էր տկն Կատերին Հոբմանը՝ Ֆրանսիայի մշակույթի նախարարի ատենադպրությամբ ուղերձը դիմելիս, որը մանսուրին հանձնեց դեսպան Միշել Լեգրան, մանրամասն նշելով այն բոլոր երկրները, որ հանձնառությամբ հանդես է եկել մանսուրն:

Օհան Դուրյանն իր խորին շնորհակալությունը հայտնեց Ֆրանսիայի կառավարությանը, Ֆրանսիայի մշակույթի նախարար տկն Հոբմանին եւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանին՝ արտիստի բարձր կոչման արժանացնելու համար եւ նշեց, «Պատասխանում եմ էլ ավելի արժեքավոր գործերով բարձրանալ արվեստի ամենաբարձր աստիճանին»:

«Ազգ» տարբերակ շնորհավորում է մեր բաց սիրելի մանսուրին եւ մաղթում նրան հոգ առողջություն եւ նորանոր բարձունքներ:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

# Պրիմակովը մտադիր է կասեցնել կապիտալի արտահոսքը

ՄՈՍԿՎԱ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ռուսաստանի կառավարությունը բոլոր միջոցները կձեռնարկի կապիտալի արտահոսքը կանխելու համար: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այս մասին հայտարարել է վարչապետ Եվգենի Պրիմակովը՝ բացելով կառավարության այսօրվա նիստը: Նա ընդգծել է, որ «կուժեղացվի վերահսկողությունը արտահանողների եւ ներմուծողների նկատմամբ»: «Մենք ամեն ինչ կանենք սողանցքերը փակելու համար», որոնցով իրականացվում են ընդհատակյա գործառնությունները, հայտարարել է նա: Կառավարությունը, հայտնել է Պրիմակովը, մտադիր է որոշում կայացնել արտահանողների կողմից արժութային հասույթի մի մասի պարտադիր վաճառքի բաժինն ավելացնելու վերաբերյալ:

# Իրանի ռազմական հզոր խմբավորում

ԵՐԵՎԱՆ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ. Իրանի զինված ուժերը, պատասխանական հարվածների համաձայն, ավարտեցին ռազմական հզոր խմբավորման ստեղծումը աֆղանական սահմանին հարող շրջաններում, նպատակ ունենալով կասեցնել «Ճակիթան» շարժման հնարավոր սպառնալիքը: Իրանի զինված ուժերի ներկայացուցչի տվյալներով, բանակը անհրաժեշտ ամեն տեսակ սպառազինություն ու տեխնիկա ունի Աֆղանստանին սահմանակից նահանգներում երկրի պաշտպանությունն ապահովելու համար: «Մենք լիովին պատրաստ ենք կատարելու զինուժերի գերագույն գլխավոր հրամանատար այաթոլլա Ալի Խամենեիի հրամանը», հայտարարել է բանակի ներկայացուցիչը: Մեկ այլ ներկայացուցիչ՝ գեներալ Հասան Բարաթին նշել է, որ «ամեն ինչ պատրաստ է լայնածավալ զորավարժություններ սկսելու համար, այդ նպատակով 500 միավոր զրահատեխնիկա եւ մեծ քանակությամբ հրետանի են կենտրոնացվել»:

# Դարձյալ նոր տնօրեն «Հայկական ավիաուղիներում»՝ Վլադիսլավ Յարոպով

Հազիվ երկու ամիս առաջ «Հայկական ավիաուղիներ» ընկերության գործադիր տնօրեն նշանակված Սրամ Սաֆարյանը հեռի փոխարինվեց նոր տնօրենով՝ Վլադիսլավ Յարոպով: 1953 թ. ծնված որոշ Յարոպովը նոր մարդ չէ ընկերության մեջ՝ դեռեւս մեկուկես տարի առաջ նա վարում էր նույն ընկերության տնօրենի պաշտոնակատարի պարտականությունները:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# ՊՈՐՏԱԳԻՐ

ՔԱՂԱՔ

## Սննդամթերքի բացօթյա վաճառքը արգելող որոշումները մնում են թղթի վրա

Մեր քաղաքացիներին երեւի ամենաշատը մտահոգում է, թե որ կրպակից, տաղավարից կամ փողոցի որ անկյունից կարկանդակ եւ փքաբլիթ կգնեն, որ հենց այնտեղ, «ոտքի վրա» էլ սկսվեն: Իսկ 50-100 դրամ արժողությամբ «պոնչիկ-պերաշկի» ուտում եւ նույն արժողությամբ էլ «Ֆանտա» եւ «Կոկա-կոլա» ենք խմում որտեղ պատահի, հաղթեղ, առանց դրանց բաղադրության եւ պատրաստողի «խոհարարական» հմտության մասին դույզն-ինչ պատկերացում ունենալու: Մայրաքաղաքի ամենաբանուկ եւ մարդաշատ փողոցներում, անցումներում ծաղիկների, հագուստեղենի, օծանելիքի տահների հարեւանությամբ գործող բացօթյա առեւտրի կետերից ուղղակի գնորդին են «հրամցնում» ախորժելի բուրմունք արձակող խորովածները, կարկանդակները եւ ներկանյութերով գունազարդված խմորեղենը: Մի քանի հարյուր դրամ ավելի ունեցող անցորդի սամոսային քաղցը նման դեպքերում պարզապես մթագնում է բանականությունը եւ նրան մղում դեպի վաճառասեղանը, ուր ծանձրացած վաճառողը բուլկիների վրայից ճանճերին է քշում: Մեր գնորդների, ավելի ճիշտ՝ քաղաքացիների սառը բանականության եւ վաճառվող սննդամթերքի մասին ունեցած ճիշտ ինֆորմացիայի նկատմամբ հավատի համար ՀՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին սիրված ենք հիասթափեցնել, քանզի սթափությունը երբեւէ չի մեղմում սամոսային քաղցը: Իսկ, ասենք, բացօթյա առեւտրով զբաղվող եւ այդ զբաղմունքը սեփական ընտանիքը պահելու մտահոգությամբ արդարացնող մեր վաճառողներին ամենեւին էլ չեն մտահոգում իրենց հայրենակիցների առողջությունը եւ տարածվող համաճարակները: Չեն մտահոգում ոչ միայն նրանց, այլեւ... քաղաքապետարանին, թաղապետարաններին եւ ՆԳ բաժինների աշխատակիցներին: Թե չէ ինչո՞ւ պետք է զովացուցիչ խմիչքների համար մեկ անգամվա օգտագործման պլաստմասսայե բաժակները երկրորդ անգամ էլ ծառայեին նույն նպատակին, իսկ արդակյա բաժակներն անլվա մի գնորդից մյուսին փոխանցվեին...

### Բժիշկը ոստիկան չէ

Այո՝, ՀՀ առողջապահության նախարարությունը կտրականապես դեմ է օրուց փչացող եւ պահպանման իրացման համար հատուկ պայմաններ պահանջող սննդամթերքի բացօթյա վաճառքին: Եվ եթե դեմ է նմանատիպ վաճառքին, ապա սննդամթերքի բացօթյա վաճառքով զբաղվողներին բժշկական սուգման ենթարկելը եւ գործունեության արտոնագիր տալը ոչ մի ձեւով չի արդարացվում: Այլապես ինչո՞ւ պետք է, նախարարության հիգիենիկ եւ հակահամաճարակային հսկողության վարչության պետի հավաստմամբ, մի կապոց գրություններ եւ որոշումներ ուղարկեին Երեւանի քաղաքապետարան եւ թաղապետարաններ, համապատասխան ՆԳ բաժիններ: Այդպիսի մի որոշում էլ կայացվել է այս տարվա մայիսի 1-ից, ըստ որի հանրապետության տարածքում օրուց փչացող, պահպանման համար հատուկ պայմաններ պահանջող սննդամթերքի բացօթյա վաճառքի կազմակերպումը պետք է արգելվեր, իսկ սննդամթերքի վաճառքի մանրածախ եւ ժամանակավոր օբյեկտների տեղադրման թույլտվությունը պետք է տրվեր միայն պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայության դրական եզրակացության առկայության դեպքում: Որոշման կատարման պատասխանատվությունը դրվել էր ՀՀ մարզպետարանների եւ Երեւանի գործերի տեղական մարմինների վրա:

Սովորաբար սանիտարահիգիենիկ տարրական կանոնները չպահպանելու, մաքրություն եւ կարգ ու կանոն չհաստատելու, սննդամթերքի բացօթյա վաճառքը չկանխելու համար մեղադրվում են միայն առողջապահության ոլորտի աշխատակիցները, որոնց խնդիրն ամենեւին էլ ոստիկանի գործառույթ իրականացնելը չէ, այլ կասկածելի որակ ունեցող սննդամթերքի հայտնաբերելը: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության վերջին որոշման պետք է արգելվի կաթի եւ կաթնամթերքների, կրեմային հրուշակեղենի, մանկական սննդի, ձկնկիթի եւ սոիսակուցային ու իմիտացված խավիարների, մսի, մսամթերքների (եփած, կիսապատրաստած, պատրաստած երշիկեղեն, պատրաստած ձուկ եւ ձկնեղեն), պահածոյացված սննդատեսակների, չփաթեթավորված եւ չպիտակավորված սննդատեսակների, անհատ անձանց կողմից պատրաստված ներկանյութերով եւ բուրահոտդիչներով հյութերի, կարամելների վաճառքը: Սակայն այս որոշումն էլ թղթի վրա կմնա այնքան ժամանակ, քանի դեռ մարզպետարանները եւ ՆԳ բաժինները չեն համագործակցում ՀՀ առողջապահության նախարարության հետ եւ իրենց գործունեությունն արդարացնում են միայն միմյանց մեղադրելով:

Որոշումներ կայացնելը հեշտ է, իսկ իրականացնե՞լը...

ԹԱՔՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

## Եթե ձեզ թափառող շուն է կծել...

ԵՐԵՎԱՆ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եթե ձեզ փողոցում շուն է կծել, հույս չունենաք, թե Երեւանի որեւէ պոլիկլինիկա կամ հիվանդանոց կօգնի՝ կատաղության դեմ պատվաստանյութ ներարկելով:

Օրերս քաղաքի կենտրոնում շունը կծել է 7-ամյա Արայիկին: Վերջի նախնական մշակումից հետո, տղայի ծնողները պատվաստանյութ ձեռք բերելու համար դիմել են շատ բուժհիմնարկներ, բայց ապարդյուն: Այն չի եղել նույնիսկ հիգիենիկ եւ հակահամաճարակաբանական հսկողության շրջանային կենտրոններում (նախկին սանէպիդկայաններ): Ի վերջո, պոլիկլինիկաներից մեկում նրանց հայտնել են, որ պատվաստանյութ կա Ավանում՝ հիգիենիկ եւ հակահամաճարակաբանական հսկողության հանրապետական կենտրոնում...

Կենտրոնի գլխավոր բժիշկ Ալեքսանդր Պարունակյանն ասաց, որ կատաղության դեմ պատվաստանյութը՝ սահմանափակ քանակության պատճառով, այսօր ունեն հանրապետության ոչ բոլոր բուժհիմնարկները:

Ինչպես ասում են, ինֆորմացիա առողջապահության համապատասխան կազմակերպություններին՝ մտորումների համար:

## Սերգեյ Բաղդասարյան. Իշխանությունը նվաճում են

ԵՐԵՎԱՆ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Աբեւմուտի տերերի կամքով իրականացված սեփականաշնորհման հետեւանքով ոչնչացվել է տնտեսությունը, շարունակվում է երկրի կողոպտումը մաֆիոզ խմբավորումների կողմից, Հայաստանի ներկայիս վարչախումբը հավասարապես պատասխանատվություն է կրում անցած տարիների համար: Այսպիսի բովանդակությամբ ելույթներ հնչեցին Հայաստանի կոմունիստական կուսակցության հանրահավաքում, որը մոտ 3 ամսվա ընդմիջումից հետո սեպտեմբերի 24-ին անցկացվեց Երեւանում:

Ընդգծելով, որ հանրահավաքն իմաստազուրկ չէ, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Սերգեյ Բաղդասարյանը հայտարարեց, թե արդեն համբերությունը հատնում է, եւ «այս հանրահավաքը ժողովրդի կամքով պետք է հրաբուխ դառնա ու հիմնահատակ քանդի իշխանական այն բուրգը, որն ստեղծվել է ՀՀՇ-ականների միջոցով»: «Իշխանությունը չեն տալիս, այլ նվաճում են, եւ դա պետք է դառնա ժողովրդին համախմբող կարգախոսը», ընդգծեց Ս. Բաղդասարյանը, ընդունելով, որ հայկոմկուսը ոգեւորվել է քանի որ Ռուսաստանի ժողովուրդը ոտքի է կանգնել. «Մեր փրկությունը միտք եկել է Մոսկվայից»:

Հանրահավաքի մասնակիցների անունից ընդունված բանաձեւում պահանջվում է ՀՀ նախագահի հրաժարականը: Բանաձեւի նկատմամբ վերաբերմունք ցույց տալու համար Հայաստանի իշխանություններին ժամկետ տրվեց մինչեւ հոկտեմբերի 7-ը: Հոկտեմբերի 7-ին համառուսաստանյան հանրահավաք է սպասվում նաեւ Ռուսաստանում:

Հանրահավաքին, որը հայկոմկուսի բնորոշմամբ «համահայկական» էր, ներկա էր շուրջ 2-3 հազար մարդ:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

## Կենտրհավորի՞ Վազգեն Սարգսյանը Վանո Սիրադեղյանին

*1996 թ. սեպտեմբերի 25-ի դեպքերին հետադարձ հայացք գցելը միշտ էլ հետաքրքիր է: Ընդ որում, հայացքն առավել մեծ հետաքրքրություն է ձեռք բերում, եթե պատկանում է ՀՀՇ վարչության նախագահ Վանո Սիրադեղյանին, որն այսօր ճակատագրի բերումով հայտնվել է ընդդիմադիրների «բանակում», որտեղ գտնվում է նաեւ ԱԺՄ-ն՝ սեպտեմբերյան դեպքերի գլխավոր «հերոսը»: Ի դեպ, ԱԺՄ-ն կարծես թե որոշել է սեպտեմբերի 25-ը նշել որպես ազգային տոն, մինչդեռ պրն Սիրադեղյանն ուներ բոլորովին այլ կարծիք: Նախկին քաղաքապետն ընդունեց ինձ իր առանձնասենյակում, տրամադրված էր բարեկամաբար եւ ծխամորճ էր ծխում: Մի պահ թվաց, թե դա խաղաղության ծխամորճն էր:*

**– Պրն Սիրադեղյան, ՀՀՇ-ն այժմ ընդդիմադիրների բանակում է, ԱԺՄ-ի հետ, որը ցանկապատ քաշելու մեծ փորձ ունի: ՀՀՇ-ն կորդեգրի՞ այդ մարտավարությունը:**

– 50-ական թթ. մայրս, խոսելով պատերազմի մասին, ասում էր՝ թող գնան այդ օրերը, էլ չգան: Հիմա նույնն է. ոչ միայն չենք անի, այլեւ ոչ ոքի չենք կամենա նման փորձանք:

**– Այդ օրերը շրջադարձային էին ուժային կառույցների համար. դրանք համոզեցին, թե ուժային կառույցները ինչ որոշիչ դեր կարող են ունենալ քաղաքականության մեջ: Այսօր ի՞նչ չափով են ուժայինները ներգործում քաղաքականության վրա:**

– Կարելի է համարել, որ սեպտեմբերի 25-ը կուլմինացիան էր: Նման իրավիճակներում նորմալ հասարակարգերում ուժայիններն էլ են դաս քաղում: Փաստորեն, որ ասում են «խաղաղության», «պատերազմի» կուսակցություն, իշխանությունում այսօր ուժային կուսակցություն է: Վերջին հաշվով, Քոչարյանը կռվող պետությունից է եկել: Միշտ էլ պատերազմի, զինադադարի ժամանակ ուժայիններն առաջնային են, հիմա առավել եւս այդ թեւն ամրացել է, ավելի մեծ գործոն է, քան 1 տարի առաջ:

**– Ինչ եք կարծում, հնարավո՞ր է, որ այս տարի Վազգեն Սարգսյանը «Հայլուրով» ենտրհավորի ձեր ծննդյան օրը:**

– Չեմ կարծում, թե կենտրհավորի, այս տարի առիթ չկա:

**– Իսկ այն տարի առիթը ո՞րն էր:**

– ՆԳՆ-ից դուրս էի եկել, բացի այդ՝ հոբելյան էր:

ՎԱՀԱԳ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## Վանո Սիրադեղյան. «Չեմ կարծում, թե Արա Սահակյանը ՀՀՇ-ում վաստակավոր է»

ԵՐԵՎԱՆ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Չեմ կարծում, թե Արա Սահակյանը ՀՀՇ-ում վաստակավոր է», ասաց Հայոց համազգային շարժման վարչության նախագահ Վանո Սիրադեղյանը՝ մեկնաբանելով ՀՀՇ-ից Արա Սահակյանի հեռացման մասին որոշումը: Ըստ նրա, ուղղակի արվել է պոպուլիստական քայլ. «Մեր ենթադրությամբ, էլեկտորատը նման հայլ էր ցանկանում. այդ հարցում մենք դրանով կբավարարվենք: Հավանական է, ամբողջ կազմակերպությունը չէ, որ համաձայն է նման որոշմանը, սակայն դրա համար կա կանոնադրական ճեւ»:

Ինչ վերաբերում է հեռացման որոշման մեջ ամրագրված ձեւակերպումներին, ապա Վ. Սիրադեղյանը չցանկացավ դրանց անդրադառնալ, նշելով միայն. «Այսպես ասենք՝ դրանք հաջող չեն»:

ՀՀՇ վարչության նախագահը համաձայն չէ ՀՀՇ անդամ Կարապետ Ռուբինյանի այն բնորոշմանը, թե տեղի է ունենում «դեմարշ» ՀՀՇ ղեկավարության կուրսի հետ անհամաձայն անդամների դեմ:

Նա վստահեցնում է, որ տեղի ունեցածը «չի դառնա կադրերի քաղաքական, քանի որ նման հակվածություն շարքերում էլ չկա: Արա Սահակյանը բացառիկ անձնավորություն է՝ իր դրական ու բացասական կողմերով, նմանապես եւ նրա հետ կապված դեպքն էր բացառիկ»:

## ՀՀՇ-ում վերականգնվելու համար՝ մեկամսյա ժամկետ

ԵՐԵՎԱՆ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հնարավո՞ր է արդյոք, որ Արա Սահակյանը, ՀՀՇ կանոնադրության ընձեռած հնարավորությունների սահմանում, բողոքարկի իրեն հեռացնելու որոշումը. այս հարցի վերաբերյալ Արմենպրեսի թղթակցի հետ սեպտեմբերի 24-ին ունեցած զրույցում պրն Սահակյանն ասաց, որ սեպտեմբերի 23-ին հանդիպում է տեղի ունեցել իր եւ ՀՀՇ վարչության փոխնախագահներ Արարատ Զուրաբյանի ու Անդրանիկ Հովակիմյանի միջեւ: Ա. Սահակյանը, իր խոսքերով, առայժմ չի դնում իր հեռացման քաղաքական կամ բարոյական գնահատականի հարցը: Նշված հանդիպման ժամանակ նա կանգ է առել «Կենտրոն» կազմակերպության ընդունած հեռացման որոշման իրավական կողմի վրա՝ դրանք առաջացված տեսնելու պահանջով: (Հիշեցնենք Արա Սահակյանի հեռացման շարժառիթները՝ «կազմակերպության վերականգնողական օղակներ ստեղծելուն գործուն մասնակցություն ունենալու, իշխանության մարմինները կուսակցության հսկողությունից դուրս բերելու, հետեւաբար դրանք այլասերելու եւ կուսակցության շարքերը հուսալքելու տեւական քանքի» եւ այլնի համար:)

Այնուհետեւ պրն Սահակյանը նշեց, որ հանդիպման մասնակիցները որոշման մեջ բերված ձեւակերպումներից միայն «վերկանոնադրական օղակներ ստեղծելուն գործուն մասնակցություն ունենալու» վերաբերյալ են հայտնել, թե դա ենթադրություն է եղել:

Իսկ ՀՀՇ վարչության փոխնախագահ Անդրանիկ Հովակիմյանը նույն օրը՝ սեպտեմբերի 24-ին, Արմենպրեսի թղթակցին հայտնեց, որ նախորդ օրը տեղի ունեցած իրենց հանդիպումը ընկերական բնույթ է կրել եւ կապ չի ունեցել «Կենտրոն» կազմակերպության ընդունած որոշման հետ: Ըստ ՀՀՇ կանոնադրության, ասաց պրն Հովակիմյանը, կազմակերպությունից հեռացվածները մեկամսյա ժամկետում կարող են դիմել կուսակցության վարչությանը՝ վերականգնման նպատակով: Անշուշտ, դա վերաբերում է նաեւ Արա Սահակյանին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի 3 անգամ եւ հրատարակիչ «Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խուս: 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻԲԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# ՈՒՇԱԳԻՐ

Անկախ Հայաստանի առօրյայում սովորական են դարձել եւ տարբեր պետական ատյանների ու հասարակական կազմակերպությունների, թվում է, օդի պես անհրաժեշտ են որոշես կանոն միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ կազմակերպվող համաժողովները, գիտաժողովները եւ սեմինարները, որոնցում հասունանում են անոթայմանորեն ազգային զանազան ծրագրեր: Ոչինչ, որ Հայաստանի բնակչությունը, համենայն դեպս առայժմ, դրանցից «խեր չի տեսել»: Քանի որ այդ միջոցառումներից, կարծես, վնաս էլ չկա, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները սովորաբար բարեխղճորեն մասնակցում, մասնակիցներից ոչ պակաս ուշադիր լսում եւ մամուլում, ռադիոյով ու հեռուստատեսությամբ լուսաբանում են դրանք:

Սոցաղ նախարարության փախստականների եւ բնակչության տեղաշարժերի վարչության (ՀԲՏՎ) նախաձեռնած եռօրյա (սեպտեմբերի 23-25-ը անցկացվող) սեմինարը, որ ուսումնական հավաք էր կոչվում, բացառություն չէր այդ առումով: Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) հայաստանյան գրասենյակի աջակցությամբ ընթացող այդ միջոցառումը նպատակ ունի լուսավորել վերջին ժամանակներս մարզերում ստեղծված վարչության կառույցների մարզային գրասենյակների կամ ներկայացուցչությունների աշխատակիցներին օնոթացնելով նրանց միգրացիայի կարգավորման միջազգային փորձին եւ հիմնախնդիրներին բնականաբար, նաեւ հայաստանյան միգրացիոն գործընթացների «ոսպնյակով»: Ուշագրավ է, որ եթե նախկինում խոսքը փախստականներին առնչվող խնդիրների մասին էր, ապա այսօր շահագրգիռ պետական եւ հասարակական կառույցների տեսադաշտում առավել մեծ տեղ է հատկացվում միգրացիայի հետ կապված հարցերին, մանավանդ, ինչպես նշեց ՀԲՏՎ պետ Մեխակ Գաբրիելյանը, Ռուսաստանում ծավալված տնտեսական ճգնաժամը Հայաստանից հեռացած մեր հայրենակիցների վերադարձի ալիք է խոստանում: Նկատենք, որ Դաղստանի վերջին իրադարձությունների հետեւանքով արդեն իսկ դաղստանաբնակ ոչ փիչ հայեր օթեւանել են Հայաստանում: Նոր խնդիրներ առաջադրելով փախստականների չդադարող պահանջներից, բողոքներից եւ ակնկալիքներից առանց այն էլ «տառապող» վարչության աշխատակիցներին:

# Միգրացիոն ծառայության ստեղծումը հասունացել է

## *Հաստատված է Մեխակ Գաբրիելյանը*

Պրն Գաբրիելյանի կարծիքով, բնակչության տեղաշարժը կարգավորելու կոչված միգրացիոն ծառայության ստեղծումը վաղուց է հասունացել, քանզի ոչ միայն փախստականները, այլեւ Հայաստանից տարբեր երկրներ (հատկապես Ռուսաստան) արտագնա աշխատանքի մեկնած մեր հայրենակիցները տեսականորեն եւ գործնականորեն անպաշտպան են իրենց նվազագույն իրավունքներն ամրագրող պայմանավորվածությունների բացակայության պատճառով: Վարչության մարզային ներկայացուցչություններն, ըստ նրա, դե ֆակտո գործոն կդառնան այդ ծառայությունը ստեղծելու համար:

Միջազգային պրակտիկայում միգրանտները դասակարգվում են 5-6 խմբերի՝ փախստականներ, հայրենադարձներ, անլեգալ միգրանտներ (դրանց թիվը Հայաստանում շատ սահմանափակ է եւ ձեւավորվում է իրաքցի, պակիստանցի եւ սուդանցի հատուկենտ «մոլորյալներով»), տարանցիկ (երրորդ երկիր մեկնելու նպատակով ժամանած) եւ աշխատանքային միգրանտներ (խորհրդային անցյալում վերջիններիս խողովակներ էին անվանում): Կան նաեւ ներքին միգրանտներ, որ առաջանում են, ասենք, վերաբնակեցման հետեւանքով:

Միգրացիոն ծառայության ստեղծումը կարեւորվում է նաեւ օրինական եւ անօրինական միգրացիայի վերաբերյալ ստույգ տեղեկություններ հայթայթելու առումով: Հայաստանում, ինչպես պարզվում է, այդ ոլորտն առ այսօր չափազանց անհստակ է, չնայած սահմանային կետերում «գնացող-եկողների» վերահսկողությանը վերջերս մասնակցում է նաեւ ՆԳ նախարարությունը՝ ի դեմս վիզաների եւ անձնագրերի վարչության աշխատակիցների, որոնք առայժմ ոչ բոլոր կետերն են վերահսկում: ՀԲՏՎ պետի կարծիքով լուրջ ուշադրություն է պահանջում աշխատանքային միգրացիայի կարգավորումը, որ «շահութաբեր բիզնես» է համարվում շատ երկրներում նավթի բիզնեսից հետո, քանզի դրսից «ներմուծված» էժան աշխատուժը լուրջ եկամուտների եւ նույնիսկ տնտեսական անկայունության աղբյուր է դառնում: Այն, որ Հայաստանը, «մեծ սփյուռք ունենալով, բարձիթողի է առել այդ ոլորտը», բացթողում է, որ անհրաժեշտ է լրացնել, գտնում է պրն Գաբրիելյանը, թեպետ անհասկանալի է, թե այդ «խոստումնալից բիզնեսն» ինչպես կարող է արդյունավետ լինել Հայաստանում, որտեղ աշխատուժի հսկայական ավելցուկ կա: Ոչ պակաս կարեւոր բացթողում է նաեւ, որ պետությունը չի կարգավորում արտասահմանում աշխատող մեր հայրենակիցների վաստակած եւ Հայաստան փոխանցվող դրամը բանկային համակարգի միջոցով տեղափոխելու խնդիրը, որ շահավետ կարող է լինել ինչպես բանկային համակարգի, այնպես էլ խաղաղացիների համար: Առավել եւս, որ կանոնակարգման դեպքում բանկերը նաեւ հարկեր կմուծեն պետբյուջե՝ համալրելով պետության գրպանը:

Ուսումնական հավաքին մասնակցում էր ՄՄԿ հայաստանյան գրասենյակի տնօրեն տկն Շիհենը, որը անդրադարձավ ՄՄԿ գործունեությանը Հայաստանում եւ այլուր: Վերջինիս «մեխը» փախստականների (այսուհետ՝ միգրանտների) համար աշխատատեղերի ստեղծումն է, որ փորձարկվել է Գյումրիում եւ Երեւանում բնակչության արտահոսքը գոնե մասամբ կասեցնելու համար: ՄՄԿ հայաստանյան գրասենյակի տրամադրության տակ եղած 300 հազար դոլար վարկը մեծ գումար չէ, ասաց տկն Շիհենը, բայց վերադարձվում է եւ դրվում օրջանառության մեջ՝ ընդլայնելով վարկի «ազդեցության գոտին»: Գրասենյակն, ըստ նրա, աջակցում է միգրացիայի կարգավորմանը, քանզի եվրոպական դոնորները «վախենում են անկանոն միգրացիայից»:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

# Առողջապահության վարչությունը մնում է իր կարծիքին

Քաղաքաշինության առողջապահության եւ սոցիալական պաշտպանության վարչության կողմից «օրենքից դուրս», այսինքն, ժամկետանց հայտարարված եւ, ըստ այդմ, հասցեատերերին չհասած կաթի փոշու առնչությամբ ՀՕՖ սենդի ծրագրի տնօրեն Գրիգոր Թաթուլյանի ասուլիսի վերաբերյալ մեր հրապարակումն անտարբեր չի թողել հիշյալ վարչության պետ Արա Մինասյանին: Պրն Մինասյանն, ինչպես պարզվեց նրա հետ հեռախոսազրույցից, մնում է իր կարծիքին՝ չնայած ՀՕՖ ղեկավարության պարզաբանումներին եւ ասուլիսի ընթացքում հրապարակված ամերիկյան հավաստագրին, որը փաստում է կաթի փոշու օգտագործման թույլատրելի ժամկետը. 1999 թ. մարտի 31: Պրն Մինասյանը պնդում է, որ կաթի փոշին ժամկետանց է, ամերիկյան ստանդարտների վկայակոչումը (որոնց համաձայն այդ երկիրն իր արտադրած կաթի փոշուն վստահում է արտադրության պահից սկսած առնվազն 18 ամիս)՝ անհիմն, քանզի, նրա կարծիքով, ստանդարտացման վարչության հավաստագրերի հիմքում ընկած 8 ամիսը հարմահունչ է միջազգային ստանդարտներին: (Հիշեցնենք, որ ինչպես իրավացիորեն նշում էր պրն Թաթուլյանը, տարբեր յուղայնության կաթի փոշիները չեն կարող պիտանիության նույն ժամկետն ունենալ):

Ինչեւէ, պրն Մինասյանը համոզված է, որ կաթի փոշու բաշխման դադարեցումն արդարացի էր, քանզի հատկապես նորածինների սննդի մեջ օգտագործելու դեպքում լուծի պատճառ կարող էր դառնալ, ինչն անթույլատրելի է հատկապես Զարթոնքում գրանցված խոլերայի համաճարակի խորապատկերում: Անորակ եւ հնացած սննդամթերքն իբրեւ երկնից թափվող մանանա ընդունելու մեր հոգեբանությունը, ինչպես նաեւ փչացած սննդամթերքն իբրեւ բարեգործություն «սաղացնելու» արեւմտյան բարեգործների հակումները պիտի վերանայվեն, գտնում է նա: Եթե ուղարկված մթերքը բարորակ չէ, ապա ավելի լավ է հրաժարվել դրանից:

Այսպիսով, եթե պրն Թաթուլյանն անտեղի է համարում քաղաքաշինարանի միջամտությունը սննդի բաշխման գործընթացին, ապա պրն Մինասյանն, ընդհակառակը, ավելորդ է համարում ՀՕՖ գրասենյակի «բարձրացած աղմուկը», առավել եւս, որ, ըստ նրա, ՀՕՖ-ն ընդամենը միջնորդ է ամերիկյան կառավարության եւ Հայաստանի ժողովրդի միջեւ: Նկատենք, սակայն, որ ՀՕՖ խողովակներով սննդի եւ այլ ծրագրեր են իրականացվում նաեւ հայ անհատ բարեգործներից հանգանակված միջոցներով, եւ, որ կարեւոր է, միջնորդի այդ առաքելությունն իրագործվում է «մաքուր ձեռքերով», առանց կրակից շագանակներ հանելու փորձերի:

Այլ հարց է, որ տված միջադեպից կարելի էր խուսափել, եթե պիտանիության ժամկետների խորհրդային եւ ամերիկյան սանդարտների տարբերությունը ժամանակին պարզաբանվեր եւ արտացոլվեր ստանդարտացման վարչության հավաստագրերում: Ինչ վերաբերում է «անորակ» սննդամթերքից հրաժարվելուն, ապա վերջինս, այնուամենայնիվ, «սպեղանի» է բազմաթիվ թշվառ հայ ընտանիքների համար, որոնք, միեւնույն է, սեղանիկների վրա եւ շեղ խանութներում վաճառվող սննդամթերքից օգտվելու հնարավորություն դեռ երկար ժամանակ, վախենամ, չեն ունենալու: Իսկ կաթի փոշու պարագայում, ինչպես նկատեց պրն Մինասյանը, կարելի է հետեւյալ խորհուրդը տալ. կաթի փոշին, որակի նկատմամբ կասկածներ ունենալու դեպքում նախընտրելի է օգտագործել մածունի կամ կաթնաշոռի վիճակում (թեեւ կենցաղային հոգսերի բովում կոփված մեր տանտիրուհիները, կարծում եմ, առանց այն էլ լավ գիտեն իրենց անելիքը):

Լ. Պ.

ՀԱՍԱՐՈՍ

# «Ֆինանսներ եւ բանկեր» շաբաթաթերթը փակվեց

Արդեն լույս տեսավ «Ֆինանսներ եւ բանկեր» շաբաթաթերթի վերջին համարը: Ի պատիվ այն Հայաստանի բանկերի ասոցիացիայի հիմնադրած պարբերականն էր: Թերթը, սակայն, փորձեց համախմբել Հայաստանի ողջ տնտեսական դաշտի լրատվությունը՝ հանրապետության տնտեսական ներկան եւ առդագան լուսաբանող հրապարակումներով: Նրա խնդիրն էր դառնալ բաց ամբիոն տնտեսական անկաշկանդ քննարկումների, չեզոք գնահատականների եւ տնտեսական շահերի ամբողջացման: Ինչպես «Ազգին» մեկնաբանեց թերթի փակումը բանկերի ասոցիացիայի նախագահ Բագրատ Ասատրյանը, «Բոլոր խմբագիրների առջեւ մեկ պահանջ էր դրված, երբեմ մի քակեմ չինովնիկի դուռը՝ ակնկալելով նրա հովանավորությունը, եղեմ ազատ եւ նպաստակ ունեցեմ, որ մի օր չինովնիկը ցանկանա բացել ձեր դուռը: Բայց ես գիտակցել եմ, որ պետությունհասարակություն, վարչարար-տնտեսավարող լկանոնակարգված հարաբերությունների ներքո սա բավական ծանր պահանջ է: Հանդիսանալով Հայաստանի բանկերի ասոցիացիայի՝ լոբբիստական կազմակերպության մարմին՝ թերթը մշտապես գտնվել է մի քանի սալի արանքում՝ անկաշկանդ ներկայացնել մեր ներկա պայմաններում միակն է՝ թերթի փակումը»:

«Ազգն» իր համերաշխությունն է հայտնում «Ֆինանսներ եւ բանկեր» շաբաթաթերթի խմբագրակազմին, գլխավոր խմբագիր Արմեն Վալեսյանին՝ ակնկալելով, որ յուրաքանչյուր ազատ եւ արհեստավարժ լրատվամիջոցի համար բնական այս հակասությունների հանգուցալուծումը շուտով այլ կլինի: Շմոռանանք, որ Հայաստանում չափազանց քիչ են տնտեսական գործընթացները լուսաբանող եւ վերլուծող թերթերը, ինչն արդյունք է հասարակության գերքաղաքականացման եւ տնտեսական արժեքների թերհամատավորման: Հակասությունների հանգուցալուծումը չպետք է դառնա թերթի փակման պատճառ:

Ն. Գ.

# Բիենալեի նվերը ՄՄԿ-ին

Օգոստոսի 5-ից սեպտեմբերի 5-ը Գյումրիում տեղի ունեցավ առաջին միջազգային բիենալեն՝ ժամանակակից արվեստի փառատոնը: Բիենալեի շրջանակներում ՄՄԶԾ գրասենյակը եւ բիենալեի կազմակերպիչները ձեռնարկեցին համատեղ ակցիա՝ նվիրված մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-ամյակին: Բիենալեին մասնակցող Գյումրիի 50 նկարիչներ ներկայացրել են մեկական նկար՝ համատեղ ստեղծելով մեկ հսկայական կտավ: 50 սմ լայնություն, 50 սմ երկարություն 50 կտավ՝ խորհրդաշրջելով հռչակագրի 50-ամյակը:

Երեկ ՄՄԿ-ի երեւանյան գրասենյակում Գյումրի քաղաքի նվիրատվությունը հանձնվեց ՄՄԿ-ի գրասենյակին, որին մասնակցում էին ՄՄԶԾ մշտական ներկայացուցիչ Կատիցա Չեկալովիչը, ՄՄԿ-ի ներկայացուցիչ Մերի Շիհենը եւ ՄՄԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի աշխատակից Էդուարդո Իրեզաբանը եւ բիենալեի համադրող Վազգեն Պահլավունի-Թադեւոսյանը: Հյուրերին եւ լրագրողներին ընդհանրապես հայտնեց Կատիցա Չեկալովիչը՝ կտավների հանձնման արարողությանը մասնակցելու, իսկ հատկապես բիենալեի կազմակերպությանը՝ այսպիսի սքանչելի նվերի համար:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆ

# «Հայկոոպի» ձեռնարկություններն՝ անմրցունակ

«Կոտայքի հասարակական սննդի կազմակերպում եւ իրացում» դուստր ձեռնարկությունն անցյալում սպասարկում էր նախկին շրջանի բոլոր դպրոցների եւ արդյունաբերական ձեռնարկությունների բուֆետ-ճաշարաններին, ինչպես նաեւ հասարակական սննդի օբյեկտներին (այդ թվում՝ ռեստորաններ): Համակարգում գործող օբյեկտների թիվը հասնում էր 82-ի: Ներկայումս ձեռնարկության կազմում մնացել է ընդամենը 5 գործող ճաշարան եւ 1 ռեստորան, մյուս կազմակերպությունները լուծարվել են: Դրան զուգահեռ, կրճատվել է նաեւ աշխատողների թիվը՝ 400-ից հասնելով 15-ի: Ձեռնարկության տնօրեն Օնիկ Պուկասյանը վերջինս բացատրեց նրանով, որ արդյունաբերական ձեռնարկությունների մեծամասնությունը գրեթե չի աշխատում, իսկ դպրոցների տնօրենները իրենք են կազմակերպում սննդի սպասարկումը: Նշենք նաեւ, որ «գործող» օբյեկտները ներկայումս գտնվում են անմխիթար վիճակում, քանի որ ենթակա են հիմնանորոգման: Նախկին տիպային նախագծերով կառուցված այդ շինությունները չեն համապատասխանում ներկայիս պահանջներին, միաժամանակ պետք է նորացվեն սպասքը, գույքը եւ սարքավորումները: Այդ ամենը ֆինանսական մեծ ներդրումներ է պահանջում, որի հնարավորությունը դուստր ձեռնարկությունը չունի: Օրվա առեւտուրը կազմակերպվում է տվյալ օբյեկտի տնօրենի ֆինանսական ներդրումների հաշվին, գնումները կատարվում են տուկայական գներով, իսկ ստացված շահույթով վճարվում հարկերն ու կոմունալ ծառայությունների արժեքը: Այսպիսով, ձեռնարկությունը մի կերպ գոյատեւում է:

Ընթացիկ տարվա 8 ամիսներին, նախատեսված 10 մլն 600 հազար դրամ ոլանային առաջադրանքի դիմաց կատարվել է 8 մլն 617 հազար դրամի աշխատանք: Թերակատարման պատճառը օբյեկտների տնօրենների ֆինանսական սահմանափակ հնարավորություններն են: Ի դեմ, ձեռնարկության տնօրենությունը վարկավորման նպատակով դիմել է «Հայկոոպ» վարչությանը: Ըստ պրն Պուկասյանի, ծրագրերի իրականացման համար պահանջվում է նվազագույնը 20 մլն դրամ, որն ամբողջությամբ կտրամադրվի հիմնանորոգմանն ու սպասարկման մակարդակի բարելավմանը: Այլ կերպ ասած, Գառնի եւ Գեղարդ մայրուղու տարբեր հատվածներում տեղաբաշխված «Հայկոոպի» օբյեկտները չեն կարող մրցակցել մասնավոր հատվածի նույն տարածքում գտնվող նույնանման ձեռնարկությունների հետ, որոնց համար հսկայական ներդրումներ են կատարվում: Հուսանք, որ «Հայկոոպը» եւս, որը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է, մոտ ապագայում ֆինանսական աջակցություն կունենա, որն էլ կտրամադրվի համակարգի ձեռնարկությունների բարելավմանը: Գուցե դա հնարավորություն ընձեռի կրկին համադրելու դուստր ձեռնարկության հարկադրաբար կրճատված լավագույն մասնագետների կազմը, որոնց մեծամասնությունը, սոցիալական ծանր պայմաններից ելնելով, ներկայումս բնակություն է հաստատել ԱՊՀ երկրներում:

ՆԵԼԼԻ ՄԵՍՏՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

## Մեր հայացքը

# Նախագահ Ռոբերտ Քոչարյանի մեծագույն սխալը

Արդեն բավական ժամանակ է, ինչ սկսվել եւ օրավուր թափ է հավաքում ներկա իշխանություններին եւ հատկապես նախագահ Ռոբերտ Քոչարյանին վարկաբեկելու-հեղինակազրկելու «գործընթացը»: Իշխանությունների հասցեին արդեն կարծես թե ասվել է ամեն ինչ՝ նրանք ե՛ւ «ապօրինի» են, ե՛ւ «աղազգային», որդեգրել են «գոտկատեղից ցածր հարվածելու» գործելակերպ, բա՛ց են վախեցել «կոմկուս-Շահնազարյան համագործակցությունից», իրականացնում են «ազգային սոցիալիզմի... անհեռանկարային գաղափարախոսություն», «ազգայնամոլ» են եւ այլն: Ինչ վերաբերում է անձամբ Քոչարյանին, ապա նա, իր հերթին, «ապօրինի» նախագահ է, իր ուրջն է հավաքել «անողնաշար կազմակերպությունների դաշինքը» եւ սարսափում է «իշխանությունը ժողովրդին վերադարձնելու եւ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու» նպատակով ու «հանուն պետականության պահպանման եւ ազգային միավորման» ստեղծվող այլ դաշինքներից, «բառունակում է նախկին նախագահի վարած սխալ քաղաքականությունը», քանի որ եղել է «նախկին նախագահի ամենամտերիմ համախոհն ու կատարածուն»... Այս որակումները, բոլորը միասին, կարելի է գտնել հենց միայն «Առավոտի» սեպտեմբերի 18-ի համարում լույս տեսած է. Սեդրակյանի «Կամ... կամ» հրապարակման մեջ, էլ չխոսելով բազմաթիվ այլ հոդվածների ու հրապարակային ելույթների մասին (այդ թվում խորհրդարանական ամբիոնից), որոնցում նախագահը մեղադրվում է Սահմանադրությունը ոտնահարելու, Աժ արտահերթ նիստ գումարելու առթիվ պատգամավորների մեկ-երրորդի պահանջը համահարելու, կոնյակի գործարանի, Արմենտելի, «Արմենիա» հյուրանոցի եւ «Հայկական ավիաուղիների» սեփականաշնորհումը, մեղմ ասած, ոչ ձեռնտու գնով իրականացնելու եւ բազմաթիվ այլ մեծ ու փոքր մեղքերի համար:

Իմ նպատակը չէ սանձնել նախագահի փաստաբանի դերը. Սահմանադրությունը խախտելու հարցին թող Սահմանադրական դատարանը պատասխան տա, վերջին չորս օբյեկտների սեփականաշնորհման ձեռնտու կամ ոչ ձեռնտու լինելուն՝ իրավաբան մասնագետները: Ես այստեղ ուզում եմ անդրադառնալ խնդրի քաղաքական կողմին, բացահայտել նախագահի եւ իշխանությունների դեմ սկսված աննախադեպ խաչակրաց արշավանքի ներքին զսպանակը:

Հանդարտ, փոքր-ինչ ավելի լայնախոհ հայացքով իրերի դրությանը նայելու դեպքում չենք կարող չարձանագրել, որ նախագահին իմպիչմենտի ենթարկելու խորհրդարանական նախաձեռնությունը, անկախ դրդապատճառներից, քաղաքական առումով դրական երեւույթ է եւ բա՛ց ավելի խոսում է ներկա նախագահի օգտին, քան՝ նրա դեմ: Կարո՞ղ էինք նախորդ ռեժիմի օրոք անգամ երեւակայել խորհրդարանի այսպիսի անլուր «հանդգնություն»: Յոթ տարի բառունակ նախկին Գերագույն խորհուրդն ու ներկայիս Աժ-ն եղել են նախկին նախագահի «գրպանի պառլամենտը» եւ հլու-հնազանդ կամակատարը: Բավական էր, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը երեւար խորհրդարանական ամբիոնում կամ նույնիսկ խոսնակի միջոցով պատգամավորներին փոխանցեր իր կամքը, եւ անգամ ամենափրփրաբերան ելույթները պատանեվում էին, ամենաաջ «մասիկները» ստորաբաբար սեղմում էին հարկավոր կոճակները, եւ այն ժամանակվա իշխանություններին ու նախագահին անհրաժեշտ ցանկացած ամենաանհեթեթ որոշում ու օրենք հեշտությամբ «անցնում էր»: այսօր հանկարծ չափից ավելի «սկզբունքային» դարձած մեր պատգամավորների «ընդդիմադիր պատի» միջով: Այն ժամանակվա ընդդիմությունը, խորհրդարանի թեկուզ հենց այդ վարկաբեկիչ-ստորաբաբ կեցվածքը մատնանշելով, իրավացիորեն խոսում էր երկրում հաստատված ավտորիտար ռեժիմի մասին: Կարելի՞ է, արդյոք, արձանագրել, որ Քոչարյանի հասցեին նախընտրական շրջանում շրջվող մեղադրանքները, թե ընտրվելու դեպքում նա կդառնա դիկտատոր՝ փաստացիորեն հերքվել են: Կարծում եմ՝ այո: Քոչարյանի «ավտորիտարիզմը», պիտի նկատել, բա՛ց ավելի մեղմ է, քան նախորդինը: Համենայնդեպս, Քոչարյանը տանկեր ու զորքեր չի հանում ժողովրդի դեմ՝ մի ամենաիսկական հանցագործություն, որն, ի դեպ, 1996-ի սեպտեմբերի 25-26-ի հավերժորեն «անմոռանալի» օրերին այնքա՛ն ջերմեռանդորեն պաշտպանում էին այսօր Քոչարյանին համերաշխությունից այժմ երեւում է ամենամերժելի գծերով: «Այն ժամանակ վախեցել ենք, հիմա՞ էլ լռենք» արդարացումը առնվազն անընդունելի է, քանզի, կրկնում եմ, համոզված չեմ՝ ավելի բա՛ց վախեցե՞լ են, թե՞ օգուտ են ունեցել: Ահա հենց այստեղ էլ, ըստ երեւույթին, թաղված է բանի գլուխը. այսօրվա «աղմկարարներից» ոչ էլերը, ակնհայտորեն, սարսափում են հենց իրենց երեկվա այդ «օգուտներ»-ից բացահայտումից, իրենց իսկական դիմակների պատռումից: Ահա եւ՝ նախահարձակ են լինում: Այսպիսիները բա՛ց վտանգավոր կարող են լինել, հատուցման սարսափը նրանց կարող է դրդել ցանկացած նոր ոճիրի, ընդհուպ պետության ներքին կայունության խախտման, որի հոգեբանական նախապատրաստությունը, ըստ իս, նախագահի եւ իշխանությունների վարկաբեկման տեսքով, արդեն սկսվել է եւ մեծ թափով բառունակվում է: «Արջն իր ահից գոռում է» ժողովրդական իմաստությունը իսկ եւ իսկ նմանների համար է ասված: Եվ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ամենամեծ սխալը, անտարակույս, այդպիսիների դիմակը պատռելուց ձեռնպահ մնալն է կամ դրա անհարկի ձգձգումը: Նախագահին մոտ կանգնած շրջանակներից հայտնի է, որ նա անվերջ մտահոգված է «վիուկների նոր որս» թույլ չտալու գաղափարով: Միանգամայն համաձայն եմ: Բայց ո՞վ է ասել, թե ժողովրդին յոթ տարի թալանած, նրա թշվառության հաշվին իրենց այլ ծակող բարեկեցությունն ապահոված, անպատժելիությունից հղփացած, երկրի տնտեսությունը կործանած, ժողովրդի բարոյական ոգին կոտրած, ազգային նկարագիրը խաթարած եւ բազմաթիվ ու բազմապիսի այլ չարիքներ գործած նախորդ իշխանությունների անփառունակ գործունեությանը քաղաքական գնահատական տալը եւ կոնկրետ ոճրագործությունների հեղինակներին իրական պատասխանատվության ենթարկելը որեւէ կապ ունի «վիուկների որսի» բոլշեւիկյան ու հիշական պրակտիկայի հետ: Եթե նախագահն այսպես է մտածում, ապա սա բա՛ց վտանգավոր մոլորություն է, որ ծանրագույն հարված է հասցնում եւ իր քաղաքական վարկին, ու ժողովրդի մեջ ունեցած հեղինակությանը, եւ իշխանությունների նկատմամբ վստահությանը: Շարքային մարդը ոչ մի կերպ չի կարող հասկանալ, թե որտեղի՞ց է գալիս իրեն տարիներով լլկած-կեղեքած երեկվա գայլերի նկատմամբ ցուցաբերվող «մեծահոգությունն» ու հանդուրժողականությունը: Ահա եւ ծայր են առնում «ոչինչ չի փոխվել», «նորը հնի հակաժողովրդական գծի շարունակողն է» կամ «նույն հիշական բնից է թռել» կարգի խոսակցությունները: Ռոբերտ Քոչարյանը պարտավոր է ժողովրդին աղացուցել , որ այդ ամենը անհիմն չարախոսություն է, որ ինքն իսկապես ազգային արժեքների կրող է եւ ազգային նկարագրի մարդ, որ «իր կուսակցությունն իր ժողովուրդն է», եւ ոչ թե ՀՀՇ-ն կամ որեւէ ուրիշը: Նախագահը պարտավոր է կատարել իր նախընտրական խոստումը նախորդ շրջանին քաղաքական գնահատական տալու, մեղքեր ու հանցանքներ գործածներին պատժելու մասին, այլապես արընթացորեն կկորցնի վստահության քվեն եւ բա՛ց կարճ ժամանակ անց կդարձվի, որ նա Հայաստանում քաղաքական հեռանկար չունի: Իսկապես որ՝ կամ... կամ: Կամ Քոչարյանը ժողովրդի հետ է՝ ընդդեմ երեկվա հանցագործների, կամ գործնականում նրանց հետ է եւ ժողովրդի դեմ: Կա նաեւ երրորդը՝ քաղաքական կամքի բացակայությունը, ինչը նույնպես չի կարող խոսել նրա օգտին: Նախագահ Քոչարյանն այլընտրանք չունի՝ մեր կյանքից, պատմությունից, մեր պետականության առօրյայից պետք է մեկընդմիշտ բացառվի հիշականությունը՝ իբրեւ երեւույթ եւ պրակտիկա, իբրեւ աղազգային գործելակերպ, որ այնքան աղետներ է բերել մեր գլխին՝ ամայացնելով երկիրն ու մարդկանց հոգիները:

ՌՈՒԲԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Հոգեւոր որոնումներ. Ինչպե՞ս եւ ինչո՞ւ

Այս կամ այն աղանդին, նրա հետեւորդներին միանգամայն դատապարտելը միշտ էլ անօգուտ մի բան եմ համարել, նրանց որեւէ դեղատոմս առաջարկելը՝ առավել եւս, քանզի այդպես անխնա ինքնադատող հասարակությունն ինքն է պարարտ հող ստեղծում նրանց տարածման համար (վկա՝ հոգեւոր գրականության սահմանափակ քանակն ու մատչելի գները, փողոցում, այլեւայլ գրքերի հետ մեկտեղ փոքու մեջ վաճառվող Աստվածաշունչը եւ այլն):

Լրագրողական հետաքրքրությունս ստիպեց ինձ ներկա գտնվել «հիսունականներ» կոչվող աղանդի պաշտամունքին, որը եւ ներկայացնում եմ նույնությամբ՝ հավելելով միայն աղանդի հետեւորդների կարծիքները: Պաշտամունքի վայրը նշելն էական չեմ համարում, որովհետեւ այդպիսի պաշտամունքներ ու հավաքներ լինում են ամեն տեղ: Նշեմ միայն, որ դահլիճում, որտեղ պաշտամունքը սկսվեց առավոտյան ժամը տասին եւ տեւեց մոտ երկուսուկես ժամ, հավաքվել էր 600-ից ավելի մարդ: Կանայք եւ երիտասարդ աղջիկները դահլիճ էին մտնում գլխաշորերով, երկարափեշ կամ կարճափեշ զգեստներով, օղարված կամ անշպար ըստ նպատակահարմարության: Մասնակիցներից շատերի ձեռքերին «Նոր կտակարան» եւ «Հոգեւոր երգարան» կային: Աղոթելու եւ երգելու ընթացքում նրանք բացում էին համապատասխան էջն ու ընթերցում: Ոմանք գալիս էին մանկահասակ երեխաների հետ, ովքեր էլ չգիտակցելով, թե ուր են եկել, ստեղ-ստեղ աղմկում էին: Իսկ ամբողջ արարողության բովանդակությունը հետեւյալն էր. քարոզիչները, ովքեր, ըստ մասնակիցների, «ավետարանիչներ» են կոչվում, միկրոֆոնով ընթերցում էին առանձին հատվածներ Աստվածաշնչից եւ բավականին պարզ, բոլորին հասկանալի լեզվով մեկնաբանում կարդացածը: Մասնավորապես այսպիսի մեկնաբանություններ էին հնչում. դատավորները եւ դատապաշտպանները ի զորու չեն զանազանելու արդարին անարդարից, անմեղին մեղավորից: Պետք է միայն աղավինել Տիրոջը, քանզի իրավաբանական գիտելիքները, օրենքների իմացությունը առանց հավատի չեն կարող բացել մեր հոգու աչքերը: Մեկնաբանությունները պարբերաբար կրկնվում էին եւ զուտ հետաքրքրությունից այնտեղ գնացած մեկին կարող էին ծանծրացնել: Դրանք ընդմիջվում էին երգեցողությամբ եւ հոսնկայս աղոթքներով, որոնց ժամանակ մասնակիցները (կին, թե տղամարդ) ձեռքերը վեր կարկաչած Տիրոջից թողություն էին խնդրում իրենց մեղքերի համար եւ մտովի կամ բարձրաձայն իրենց ցանկություններն արտահայտում: Ոմանք էլ թղթի կտորի վրա գրելով այդ ցանկությունները՝ հանձնում էին «ավետարանիչներին», որ նրանք օրհնեն: Երբ դահլիճում տարածվում էր մեղեդին (երգողը երիտասարդ կին էր), տեքստի բառերը խոշորացված երեւում էին էկրանին, իսկ մասնակիցները միահամուռ ծայնակցում էին՝ ամեն քառատողից հետո կրկնելով «օվսաննաներն» ու «ալելույաները»:

Պաշտամունքի ավարտից հետո առիթը բաց չթողեցի զրուցելու մասնակիցներից մի քանիսի հետ: Տպավորությունն առհասարակ այնպիսին էր, որ շատերն Աստծո որոնումը սկսել են անձնական կյանքում ունեցած դժբախտություններից եւ կրած տառապանքներից հետո: Մարդիկ կան, ովքեր պաշտամունքի են գնում տեւական ընկճվածությունից, հոգեւոր անելանելիությունից, մարդկանց եւ երկրային ամեն ինչի նկատմամբ հավատի կորուստից: Եվ պարբերաբար ամեն կիրակի հավաքների գնալը նրանց համար հոգեւոր ազատագրման պես մի բան է: Միջին տարիքի մի ուսուցչուհի պատմում էր, որ ժամանակին ինքն աթեիստ է եղել, գլուխը լցրել է ամեն տեսակ գիտելիքներով, շատ կարդացել, բայց Աստծո խոսքին անհաղորդ մնալու պատճառով ժամանակին չի կարողացել ճիշտ ապրել: Եվ ահա միայն վերջերս է հոգեկան անդորր գտել, հրաժարվել գայթակղություններից: Կինը պատմում էր նաեւ, որ Տիրոջ շնորհիվ ամուսնու անսպասելի բուժումը եւ փրկությունն անխուսափելի մահից՝ առիթ է դարձել, որ նա հավատով ապրի եւ չհուսալքվի դժվարին իրադրություններում:

Ինձ հայտնեցին նաեւ, որ մանուկների եւ երիտասարդների պաշտամունքներ են լինում՝ նույն դահլիճում, տարբեր օրերին: Մասնակցում են դպրոցական տարիքի երեխաները, անգամ ավելի կրտսերները: Մանկական հավաքների ժամանակ հատվածներ են ընթերցվում «Մանուկների Աստվածաշնչից», խաղ-վիկտորինաներ են կազմակերպվում, որոնց ժամանակ երեխաների աստվածաշնչյան գիտելիքներն ու իմացությունն են ստուգում, հոգեւոր երգեր են սովորեցնում: Ամենահետաքրքիրը 7-ամյա Կարինեն էր: Նա ինձ հավատացնում էր, որ ինքն Աստծո զավակն է եւ ամեն օր ուտելուց եւ քնելուց առաջ ջերմեռանդորեն աղոթում է: Աղոթում է, որ Աստված բոլոր հիվանդներին ու տկարներին բուժի, մուրացիկներին հաց ուղարկի: Իմ հարցը, թե արդյոք բացասական հետեւանքներ չե՞ն թողնի նմանատիպ հավաքները մանկական փխրուն ներաշխարհի վրա, ծնողները ժխտեցին եւ հավատացրին, որ այդ մասին գիտեն նաեւ դպրոցներում, իսկ պատշաճունքների գնալը երեխաների մեջ միայն բարություն եւ մարդասիրություն է դաստիարակում: Ի վերջո, քրիստոնեությունն այնքան անհատական կրոն է, որ ամեն մարդ յուրովի է հասկանում եւ հավատում, եւ եթե ոմանք եկեղեցի գնալն ու մոմ վառելն են ճիշտ համարում, ապա ոմանց հավատն էլ այսպիսի դրսեւորումներ է ունենում: Եվ եթե բարերար ազդեցություն է ունենում, մարդկանց բարի եւ կամեցող դարձնում, պարզ եւ մատչելի մեկնություններով հաղորդակից են դառնում Սուրբ Գրքին, ի՞նչ մի դատապարտելի բան կա դրանում: Աղանդի հետեւորդները հայտնեցին, որ պաշտամունքներից դուրս ապրում են առօրյան հոգսերով, զբաղվում հանրօգուտ աշխատանքով, եւ աղանդն իրենց աշխատանքում եւ կենցաղում որեւիցե տարբերություն չի դնում:

Այդ դեպքում հարց է առաջանում՝ իսկ Հայ եկեղեցին դնո՞ւմ է նման տարբերություններ կամ սահմանափակումներ: Միանշանակ՝ ոչ: Ուրեմն, առաջանում է 2-րդ հարցը՝ ի՞նչ կարիք կա եւ ի՞նչ նպատակով է փորձ կատարվում քրիստոնյաներին վերստին քրիստոնյա դարձնելու:

ԹԱԳՈՒՀԻ ՀԱՍԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Միջազգային

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

## Լիբանանը Արաբական աշխարհի բանալիներից է Հայաստանի համար

### «Ազգին» փաստարկեց նախարար Շահեն Կարամանուկյանը

***Վարչապետ Արմեն Դարբինյանը հայաստանյան կառավարության եւ գործարար աշխարհը ներկայացնող պատվիրակության հետ նոր է վերադարձել Լիբանան կատարած այցից: Թանմը նոր է չորացել պայմանագրերի ներքո, եւ արդեն ժամացույցի սլաքը սկսում է իր ընթացքն այդ այցի արդյունքում կնքված պայմանագրերի օգտակար գործունեության ուղղությամբ: Իսկ այցն ունի թե՛ ընդհանուր քաղաքական, թե՛ տնտեսական նշանակություն: Կառավարության օպերատիվ հարցերով նախարար Շահեն Կարամանուկյանը, որն ի պաշտոնե ստորագրել է հայ-լիբանանյան երկու պայմանագրեր՝ կրկնակի հարկումից խուսափելու եւ զբոսաշրջիկության զարգացման, ինչպես նաեւ մասնակցել Հայաստան-Լիբանան «Համագործակցության եւ բարեկամության» մեծ համաձայնագրի մշակման աշխատանքներին, «Ազգի» համար պարզաբանեց պայմանագրերի նշանակությունը եւ առաջադրանքները:***



– Երբ 1997 թվականին Հայաստանում բացվեց երկու դեսպանատուն՝ Սիրիայինը եւ Լիբանանինը, դա արդեն խոսքոր նվաճում էր, որ վկայում էր հայ-արաբական հարաբերությունների զարգացման մասին: Այս երկու երկրները Անդրկովկասում դեսպանություն ունեն միայն Հայաստանում, նշանակում է՝ մեր երկրների եւ քաղաքական, եւ տնտեսական, մշակութային հարաբերությունները զարգանում են շատ բարեհաջող: Ստեղծված է լուրջ պայմանագրային դաշտ: Երբ Ռաֆիկ Հարիրին ժամանեց Երեւան, ստորագրվեց Անվտանգության եւ համագործակցության մեծ պայմանագիրը: Լիբանան կատարած մեր վերջին այցի ընթացքում վարչապետ Արմեն Դարբինյանը եւ Ռաֆիկ Հարիրին վավերացրին պայմանագիրն ուժի մեջ մտնելու հուշագիրը: Ստորագրվեցին նաեւ մախսային բնագավառում երկակի հարկումից խուսափելու, զբոսաշրջիկության, կրթության ոլորտներում համագործակցության պայմանագրեր: Լիբանանը շատ կարեւոր նշանակություն ունի մեզ համար ողջ արաբական աշխարհում՝ թե տնտեսական, թե կրթամշակութային եւ քաղաքական տեսանկյուններից: Միջոցներ այն այցի կարեւոր առանձնահատկություններից էր այն, որ առաջին անգամ կառավարական հանդիպմանը զուգահեռ կազմակերպվեց բիզնես ֆորում: Բայց անկեղծ լինելու համար նշենք, որ եթե կառավարական այցի մակարդակով լավ պատրաստված էինք, արդա բիզնես ֆորումի առումով՝ ոչ: Մեր բիզնեսմեններին դեռեւս պակասում է արագ կարեր հասատելու փորձը: Թեեւ դրա համար ժամանակ է պետք, եւ հաջորդ անգամ մեր բիզնեսմեններն ավելի պատրաստված կլինեն նման ձեւերի, եւ առկա հնարավորությունները կօգտագործվեն առավելագույնս:

**– Պրն Կարամանուկյան, կրկնակի հարկումից խուսափելու պայմանագիրը եւ տնտեսական ազատ գոտի ստեղծելու Ռաֆիկ Հարիրիի առաջարկը որքա՞ն ժամանակից գործնական ուժ կստանան:**

– Երկակի հարկումից խուսափելու պայմանագիրը, կարծում եմ, խորհրդարանն առանց ծգձգումների կվավերացնի, դրանով իսկ լուրջ նախադրյալներ կստեղծվեն փոխադարձ տնտեսական ձեւումների եւ ներդրումների իրականացման համար: Իսկ ազատ առեւտրի գոտի ստեղծելու գաղափարը դեռեւս քննարկման ընթացքում է: Տեսակետ կա, որ դրի անհրաժեշտ է մախսատուրքերն ընդհանուր իջեցնել եւ Հայաստանի ողջ տարածքը վերածել ազատ առեւտրի գոտու: Օտարերկրյա ներդրողների եւ համաշխարհային ծեռնարկություններին նման սկզբունքով խրախուսելու առաջին քայլերն արդեն կատարվել են: Այսպես, աղեցի գոտում շահութահարկի էական թեթեւացումներ կան, նույնը սահմանամերձ մարզերում:

**– Ինչպիսի՞ն են Հայաստան-Լիբանան առեւտրաշրջանառության ծավալները, այսինքն՝ ի՞նչ ենք մենք արտահանում եւ ի՞նչ ներմուծում Լիբանանից:**

– Մեր առեւտրաշրջանառությունը փոփոխական վայրէջ-վերելքներով է: 1995 թ. Հայաստան-Լիբանան առեւտրաշրջանառությունը կազմել է 3,7 մլն ԱՄՆ դոլար, 96-ին՝ 1,3, 97-ին՝ 6,2: 98 թ. առաջին կեսին առեւտրաշրջանառությունը դարձել է 4,2 մլն: Եթե անցած տարիներին մեր արտահանումն ավանդական էր մեսաղի ջարդոն, իսկ ներմուծումը՝ սննդամթերք, լայն սպառման առարկաներ, ապա այս տարի լուրջ փոփոխություն է նկատվել արտահանման եւ ներմուծման կառուցվածքում: Այս տարի արտահանել ենք նաեւ սարքավորումներ, հաստոցներ, նույնը տեղի է ունեցել ներմուծման դեպքում: Եթե համեմատելու լինենք Լիբանանի բաժինը մեր ընդհանուր ներմուծման եւ արտահանման կառուցվածքում, ապա 96 թ. առաջին կեսին Լիբանանից կատարված ներմուծումը կազմել է մեր ընդհանուր ներմուծման 0,8 տոկոսը, իսկ արտահանման՝ 0,7 տոկոսը: Երկակի հարկումից խուսափումը եւ առանց մախսերի ու տուրքերի առեւտուրը կխթանի առեւտրաշրջանառության ծավալները:

**– Ռաֆիկ Հարիրին տնտեսական համագործակցությունը զարգացնելու համար առաջարկել է նաեւ ավելացնել «Հայկական ավիաուղիների» չվերթերը՝ Երեւան-Բեյրութ: Ե՞րբ դա տեղի կունենա:**

– Տրանսպորտի նախարար Երվանդ Զախարյանին արդեն հանձնարարված է կազմակերպել Երեւան-Բեյրութ լրացուցիչ չվերթեր, եւ կարծում եմ՝ հոկտեմբերին դա կկատարվի: Իրանի օրինակով ասեմ, որ չվերթերի ավելացումը չափազանց կարեւոր է, գործարարները սովորաբար մեկ շաբաթով չեն կարող իրենց թույլ տալ ուղեւորություններ կատարել, իսկ 2-3 օրը բավարար ժամանակամիջոց է գործարար կապեր հաստատելու եւ աշխատանքը վերահսկելու համար: Ընդ որում՝ նշենք, որ այդ չվերթերը կկազմակերպի ոչ թե «Միդլ-իստ» ավիաընկերությունը, այլ «Հայկական ավիաուղիները»: Նկատի ունենալով «Հայկական ավիաուղիների» առայժմ փոքր շուկան, Լիբանանը այս հարցում եւս բարյացակամ քայլ է կատարում դեպի մեզ:

**– Պրն Կարամանուկյան, դուք վավերացրել եք նաեւ զբոսաշրջիկության պայմանագիրը: Ինչո՞վ է կիրառելի լիբանանյան փորձն այս ոլորտում Հայաստանի համար:**

– Լիբանանից սովորելու շատ բան ունենք, մինչեւ պատերազմը Լիբանանի բյուջեի կեսից ավելին գոյանում էր զբոսաշրջիկության եկամուտներից: Այժմ արդեն սկսվել է վերականգնման ժամանակաշրջանը: Անցյալ տարի Լիբանան է այցելել 600 հազար զբոսաշրջիկ, համեմատության համար կարող եմ ասել, որ Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը 20 անգամ փոքր է: Այսինքն՝ զբոսաշրջիկության բնագավառում կարելի է դիտարկումներ անել, մենք ինչեր սովորելու բան կա: Պայմանագիրը ստորագրվեց, եւ շատ ժամանակ է պետք այդ ամենը գործուն հիմքի վրա դնելու համար:

**– Ռաֆիկ Հարիրին իր ելույթում հատուկ շեշտել է, որ Լիբանանը Հայաստանից ակնկալում է ներմուծել բարձր տեխնոլոգիաներ, ո՞րն է դրա հիմքը:**

– Այո, մեր ինժեներատեխնիկական ներուժը չափազանց բարձր է: Այսպես, Հայաստանի նախագծային ինստիտուտների մշակած ծրագրերը թե ԱՊՀ, թե ընդհանրապես միջազգային մրցույթներում հաղթող են ճանաչվում: Դրանք որակյալ են եւ մատչելի: Լիբանանում կրթության նախարարների միջեւ ստորագրած համաձայնագիրը եւս թույլ կտա մասնագետների փոխանակում եւ փոխայցելություններ կազմակերպել, գիտական համատեղ աշխատանքներ իրականացնել: Ռաֆիկ Հարիրին շեշտեց, որ Լիբանանի համար շատ ավելի հետաքրքիր է համագործակցել անցումային փուլում գտնվող երկրների հետ, այս պարագայում մեզ միավորում է նաեւ մտածելակերպի ընդհանրությունը: Այսինքն՝ լիբանանցի գործարարի համար շատ ավելի դյուրին կլինի հայ գործարարների եւ մասնագետների միջոցով կապեր հաստատել ԱՊՀ երկրների հետ: Հայաստանի միջոցով Լիբանանը կկապվի Կասպից ծովի ավազանի երկրների եւ Միջին Ասիայի հետ:

**– Կառավարական պատվիրակության կազմում էր նաեւ էներգետիկայի նախարար Գագիկ Մարտիրոսյանը, էներգետիկայի ոլորտում մեր համագործակցությունն ի՞նչ ուղղություններ կարող է ունենալ:**

– Էներգետիկ համակարգի օղակներն ընդլայնվում են եւ միավորվում: Մերձբալթյան երկրների օրինակը ցույց է տալիս, որ կարելի է տարեկան մինչեւ 14 մլրդ դոլարի էլեկտրաէներգիա տնտեսել, ժամային տարբեր գոտիների հաշվին, չօգտագործելով լրացուցիչ հզորություններ, վերաբաշխել արդեն արտադրված էներգիան: Այս ոլորտում Հայաստանը լուրջ փորձ ունի: Մեր էներգահամակարգը նախապատրաստված է էներգիա հանձնելու եւ տալու: Այսօր Լիբանանը, Սիրիան, Հորդանանը, Եգիպտոսը եւ Թուրքիան արդեն համագործակցում են միասնական էներգահամակարգ ստեղծելու ուղղությամբ եւ բացառված չէ, որ անդրկովկասյան երկրները եւս կընդգրկվեն այդ համագործակցության մեջ:

ՆԱՐԵՆ ԳԻԼԱՐՅԱՆ

ՏԱՐԱՌՈՍ

## «Ռուս-իրանական հարաբերությունները լավ հեռանկարներ ունեն»

ԹԵՀՐԱՆ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուս-իրանական հարաբերությունները լավ հեռանկարներ ունեն, եւ երկու կողմերն էլ չեն թաքցնում իրենց շահագրգռվածությունը դրանց խորացմամբ: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այդ մասին չորեքշաբթի օրը հայտարարել է ՌԴ Պետդումայի նախագահ Գենադի Սելեզնյովը՝ Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Ակբար Նաթեղ Նուրիի հետ Իրանի մայրաքաղաքում տեղի ունեցած համատեղ մամլո ասուլիսում: Մամլո ասուլիսի ընթացքում ընդգծվել է Ռուսաստանի ու Իրանի դիրքորոշումների ընդհանրությունը՝ միջազգային ու տարածաշրջանային խնդիրների ամբողջ համալիրի նկատմամբ: Մասնավորապես նշվել է կարծիքների նմանությունն Աֆղանստանի վերջին իրադարձությունների, մերձավորարեւելյան հիմնախնդրի, Կասպից ծովի կարգավիճակի շուրջ: Պատասխանելով իրանա-ամերիկյան հարաբերությունների հեռանկարներին առնչվող հարցին՝ Իրանի մեջլիսի խոսնակը հայտարարել է, որ դրանցում առայժմ ոչ մի փոփոխություն տեղի չի ունենում: «ԱՄՆ-ի դիրքորոշումն Իրանի նկատմամբ չի փոխվել: Ներկայումս Ամերիկան աշխարհում գործում է գերազանցության եւ ուժի դիրքերից, ինչը հաստատում են ինքնիշխան պետությունների տարածքների վերջին հրթիռակոծումները», նշել է Նաթեղ Նուրին:

## Հնդկաստանը եւ Պակիստանը վերսկսելու են բանակցությունները

ԴԵԼԻ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հնդկաստանի վարչապետ Աթալ Բիհարի Վաջպային եւ նրա պակիստանցի պաշտոնակիցը՝ Նավազ Շարիֆը, որոշեցին աղաչքատիկել ավելի քան մեկ տարի փակուղու մեջ գտնվող երկկողմ հարաբերությունները եւ վերսկսել դիվանագիտական խորհրդակցությունները դրանք կարգավորելու նպատակով: Չորեքշաբթի Նյու Յորքում կայացած հանդիպման ժամանակ Հնդկաստանի եւ Պակիստանի կառավարությունների ղեկավարները հայտարարել են, թե Հարավային Ասիայի երկու հարեւան պետությունների փոխհարաբերություններում «նոր գլուխ է բացվում»: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, բանակցությունների արդյունքների վերաբերյալ համատեղ կոմյունիկեում, որն այսօր տարածվել է Դելիում, Վաջպային եւ Շարիֆն ընդգծել են իրենց վարչակազմերի պատրաստակամությունը՝ «խաղաղությամբ կարգավորելու երկկողմ հարաբերությունների գլխավոր խնդիրները, ներառյալ Քաշմիրի հարցը»: Այդ խնդիրների շուրջ արտգործնախարարությունների քարտուղարների մակարդակով բանակցությունները որոշված է վերսկսել հաջորդ ամսին՝ Իսլամաբադում:

## Մոսկվայում բացվեց «Ոսկերիչ-98»-ը

ՄՈՍԿՎԱ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մոսկվայում բացվել է «Ոսկերիչ-98» միջազգային ցուցահանդես-տոնավաճառը: Ռուսաստանի ոսկերչական արդյունաբերությունը կայունության կղզյակներից մեկն է», ցուցահանդեսի բացման ժամանակ ասաց Ռուսաստանի պետական պահուստարանի ղեկավարի տեղակալ Անդրեյ Կուտեպովը: Բացվող ցուցահանդեսը, ընդգծեց նա, վկայում է, որ «Ռուսաստանի արդյունաբերության ներուժը տակավին վատնված չէ, կվերականգնվի»:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, «Սոկոլնիկի» ցուցահանդեսային համալիրի երեք դահլիճներում իրենց արտադրանքը (ավելի քան 30 հազար ոսկերչական իրեր, ինչպես նաեւ հուշանվերներ, զարդեղեն, ժամացույցներ, բյուրեղապակու եւ էմալապակու արտադրանքներ) կներկայացնում են շուրջ 40 ֆիրմաներ Ռուսաստանից, ԱՊՀ երկրներից, ինչպես նաեւ Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Իտալիայից, Շվեյցարիայից, Ֆրանսիայից եւ Ֆինլանդիայից:

## Շրջանառության մեջ են դրվում նոր նմուշի 20-դոլարանոցները

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Այսօրվանից Միացյալ Նահանգներում շրջանառության մեջ են դրվում նոր նմուշի 20-դոլարանոց թղթադրամներ՝ կեղծումներից պաշտպանության կատարելագործված աստիճանով: Նախկին թղթադրամները նորերի հետ մեկտեղ շրջանառության մեջ կգտնվեն եւ կմնան որպես օրինական վճարամիջոց: Նոր թղթադրամի հիմնական արտաքին տարբերությունն այն է, որ ԱՄՆ-ի յոթերորդ նախագահ Էնդրյու Ջեքսոնի դիմանկարը կենտրոնից տեղափոխված է եւ մեծացված:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Մշակույթ

*«Ազգային ճեմարանը մեծ ու նոպաստավոր դեր ունի հայ միտքն ու գործը զարգացնելու հարցում»:*
*ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ*

*«Մոսկվայում Հայ մշակույթի տան ստեղծմամբ դրվեց հայկական մշակույթի զարգացման նոր փուլ: Բացի այդ, այն մեծապես նպաստավոր եղավ հայ-ռուսական փոխառնչությունների համար»:*
*ԱՐՄԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

## Մոսկվայի հայ համայնքի մշակութային կյանքը

Պատմականորեն հայտնի եւ անուրանալի է տարբեր ժամանակափուլերում Մոսկվայում ստեղծված հայ կրթական, մշակութային օջախների նշանակությունը՝ ազգի հոգեւոր կարողության պահպանման եւ զարգացման խնդրում:

Մոսկվայի հիշյալ օջախների հետ մեկտեղ, 20-րդ դարի առաջին 3 տասնամյակներում զգալի դեր են խաղացել նաեւ Ռոստովում, Լվովում, Բաքվում եւ հատկապես Թբիլիսիում գործող հայ մշակույթի տները: Օջախներ, որոնց վրա՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական այն ծանր տարիներին, մեծապես դրված էր ազգային մշակույթին սատար լինելու առաքելությունը:

Քաղաքական, պատմական, ազգային այլափոփոխ հարաբերությունների հենքի վրա, Խորհրդային Միության տարածքում գործող նախկին նմանատիպ հայ մշակութային օջախներից ոչ մեկը մեր օրերում չի գործում: Սակայն, արդ, ծանոթանալով Մոսկվայի հայ համայնքի եռանդուն գործունեությանը, կարելի է վավերել, որ այսօր այն, իրապես, միակն է, որ ստանձնել է ազգային մշակույթը հայրենյաց հողից դուրս պահպանելու, երիտասարդ սերնդին ներկայացնելու եւ մշակութային փոխառնչություններ զարգացնելու շնորհակալ խնդիրը: Այսօր Մոսկվայի հայ համայնքի նախագահն է Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, չորս այլ՝ այդ թվում նաեւ արտասահմանյան, ակադեմիաների իսկական անդամ, ՌԴ ակադեմիայի Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, դոկտոր, պրոֆեսոր Սամվել Գրիգորյանը: Նրա գործընկերներն են գիտությունների թեկնածուներ, տեղակալ Մանվել Դոլաբյանը, պատասխանատու քարտուղար Ալբինա Սուքիասյանը, ինչպես եւ Սամվել Մելիքյանը, Անուշավան Պողոսյանը եւ այլք: Արժե հիշատակել, որ հայ համայնքը իր տնօրինության տակ չունենալով «ազատ» ֆինանսական միջոցներ, ջանք չի խնայում նյութապես ու բարոյապես սատար կանգնելու Մոսկվայում ապաստանած հայ գաղթականներին: Ուսումնասիրած փաստերը վկայում են, որ համայնքը նշանակալի աշխատանք է տանում Մոսկվայի հայությանը համախմբելու, նրա հոգեւոր կյանքը առավել հետաքրքիր դարձնելու, մշակութային ասպարեզում հայ արվեստագետներին պատշաճ տեղ հատկացնելու գործում: Խնդիրներ, որոնք, գործի իմացություն եւ ջանակուռ աշխատանք են պահանջում: Վերջին տարիներին համայնքի մշակութային գործունեության գեղարվեստական ղեկավարն է ճանաչված կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր եւ հասարակական գործիչ Վլադիլեն Բալյանը, որը բնակվելով Երեւանում, յուրաքանչյուր մի քանի ամիսն անց է կացնում Մոսկվայում, ուր առաջատար երաժշտական հաստատություններում ուսանում են իր շնորհաշատ թոռները: Ընթերցողին հետաքրքիր կլինի իմանալ, որ Մոսկվայի հայ համայնքի պատվավոր անդամներ են Սիլվա Կապուտիկյանը, Զորի Բալայանը, Կիմ Բակչին: Համայնքի պատվո անդամ է նաեւ Վլադիլեն Բալյանը: «Իսկ ինչո՞ւ պատվո... կաշխատեմ լինել գործնական անդամ», իրեն հատուկ եռանդով որոշեց Վլադիլեն Բալյանը եւ առանց հապաղելու ձեռնամուխ եղավ համայնքի մշակութային նպատակների իրագործմանը: Դրանց իրականացման ճանապարհին, անշուշտ, լինում են զանազան խոչընդոտներ, հատկապես նյութական: Բացի այդ ցայսօր համայնքը չունի սեփական շենք եւ օթեւանում է Մեխանիկայի ինստիտուտի հարկի տակ: Սակայն այս ամենը չի արգելակում նրա ղեկավարներին, մասնավորապես Վլադիլեն Բալյանին, Մոսկվայի հոգեւոր կյանքը ավելի հետաքրքիր դարձնելու համար: Համայնքը նշում է ապրիլի 24 եւ մայիսի 28 օրերը, կազմակերպում է հանդիպումներ հայ եւ այլազգի նշանավոր արվեստագետների, գիտնականների հետ, նշում հայ երեւելի մշակներին նվիրված հոբելյանները, նախաձեռնում հետաքրքրաշարժ այցելություններ Մոսկվայում բնակվող հայ նկարիչների, քանդակագործների արվեստանոցներ: Ակնատես-մասնակիցները միջոցառումների թվում հատուկ շերմությամբ հիշատակում են ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Պավել Լիսիցյանի, Զարուհի Դոլուխանովայի հոբելյանները, վաստակաշատ, անվանի նկարիչներ Ֆրիդրիխ Սողոյանի, Մարիամ Ասլամազյանի, Ռուդոլֆ Խաչատրյանի, քանդակագործ Նիկոլայ Նիկողոսյանի հետ ունեցած հանդիպումները, նաեւ մի շարք գրական միջոցառումներ, որոնք կազմակերպում է գրական ասպարեզով զբաղվող Բերդ Բաբայանը: Համայնքը մասնակցում է նաեւ իր ծիրից դուրս տեղի ունեցող միջոցառումներին: Հիշարժան է նրա եռանդուն մասնակցությունը արվեստագիտության դոկտոր, հայ երգարվեստի երկրպագու Սերգեյ Յակովենկոյի «Պավել Լիսիցյան» եւ «Կախարդիչ Զարա Դոլուխանովա» գրքերի (լույս է ընծայել Մոսկվայի «Սուզիկա» հրատարակչությունը) շնորհանդեսներին: Հիշատակելով համայնքի գործնական եւ ստեղծագործական փոխառնչությունները, հարկ է մատնանշել Մոսկվայի քաղաքապետարանը եւ մայրաքաղաքի այլ համայնքները վրացական, հրեական, կորեական, որոնց հետ պարբերաբար անց են կացվում համատեղ միջոցառումներ: Համայնքը նաեւ սերտ կապի մեջ է Մոսկվայի հայկական դպրոցներից մեկին կից ստեղծված Հայկական մշակութային կենտրոնի ու թիվ 1 պետական հայկական դպրոցի եւ ՀՀ դեսպանությանը կից կիրակնօրյա հայկական դպրոցի հետ: Ստեղծագործական կապեր են հաստատված՝ հատկապես հայ երաժշտությունը տարածելու միտումով. Պյոտր Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի հետ, ուր լավագույն մանկավարժների թվում են ՀՀ ժողովրդական արտիստ, միջազգային մրցույթների դափնեկիր պրոֆեսոր Յուրի Հայրապետյանը, միջազգային մրցույթի դափնեկիր, պրոֆեսոր, ջութակահար Արա Բոգդանյանը, ինչպես եւ նորաստեղծ մի թատրոնի հետ: Ուշագրավ է, որ այդ թատրոնը կրում է ռեժիսոր Ռուբեն Սիմոնովի եւ նրա որդիների անունը, իսկ թատրոնի գեղարվեստական ղեկավարն է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, հանրահայտ դերասան Յուրի Յակովլեւը:

«Հայրենիքից դուրս, Մոսկվայում մեր հայրենակիցների մեջ ազգայինի, հայկականի մեծ կարոտ կա», ասում է Վլադիլեն Բալյանը, եւ մենք ջանում ենք ամեն ինչ անել այդ ծարավը հագեցնելու համար: Կազմակերպում ենք նաեւ համերգներ Հայաստանից հյուրախաղերի եկած արտիստների մասնակցությամբ: Իսկ մեր միջոցառումների մշտական մասնակիցները եւ հյուրերն են մոսկվաբնակ հայազգի ճանաչված արվեստագետներ. ՀՀ ժողովրդական արտիստուհիներ Կարինե եւ Ռուզան Լիսիցյանները, Մոսկվայի հայկական կամերային երգչախումբը տաղանդաշնորհ Նելլի Անդրեասյանի ղեկավարությամբ, Մեծ թատրոնի եւ Նոր օպերայի երիտասարդ մենեջիր Տիգրան Մարտիրոսյանը, ճանաչված երգիչների Հովհաննես Բաղալյանի եւ Ռաիսա Մկրտչյանի դուստր Նունե Բաղալյանը եւ Արմինե Սարգսյանը, երգչուհի Զինաիդա Սազոնովան, վոկալ անդամների նոր աստղ Կարինե Զաքարյանը, որը վերջերս Մոսկվայի կենտրոնական հեռուստատեսության նախաձեռնած «Ռոմանսիադա» մրցույթում գրավելով առաջին տեղը, անմիջապես հրավիրվեց Կոլոբովի նորաստեղծ Նոր օպերան, Գնեսինների անվան երաժշտական ակադեմիայի հայ առաջադեմ սաներն ու մանկավարժները ի թիվս Ռուսաստանի Դաշնության վաստակավոր արտիստուհիների՝ մեծանուն դիրիժոր Կոստանտին Սարաջեւի դստեր Կիրա Սարաջեւայի եւ ճանաչված դաշնակահարուհի Մարիա Ղամբարյանի: Երաժիշտ կատարողներ, որոնք զգալի ներդրում ունեն հայ երաժշտարվեստը Կոմիտասից, Եկմալյանից մինչեւ արդի կոմպոզիտորների ստեղծագործությունների տարածման շնորհակալ գործում:

Քչերը գիտեն, որ Մոսկվայում այսօր գործում է Հայ կամերային թատրոն, որի հիմնադիր-ղեկավարն է Ժաննա Աղասյանը: Այն նույնպես իր գեղարվեստական նպաստն է բերում համայնքի մշակութային կյանքին: Համայնքի առաջ պարբերաբար ելույթ է ունենում նաեւ Ռուսաստանի պետական կամերային նվագախումբը, որի գեղարվեստական ղեկավարն է Կոնստանտին Օրբելյան կրտսերը: Եվ դեռ շատ ու շատ արժեքավոր նախաձեռնություններ կարելի է հիշատակել, ներկայացնելով մեր ընթերցողին Մոսկվայի հայ համայնքի այսօրվա մշակութային նկարագիրը:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

## Հայ Վիոլետան ուրիշ համայք է հավելում «Տրավիատայի» անմահ գույնին

Դյուսելդորֆի օպերային թատրոնում (Դոյչե օպեր ամ Ռայն) շարունակվում է Վերդիի «Տրավիատա» ներկայացման տոնը: Եվրոպայում ճանաչված Ուրսել եւ Կարլ-Էռնստ Հերման ամուսինների բեմադրած այս ներկայացումը, հանդիսատեսներից շատերի կարծիքով, էապես շահել է, քանի որ գտնվել է «չքնաղ ձայն եւ դերասանի վարպետություն ունեցող Վիոլետա-Հասմիկ Պապյանը»: Ընդմիջմանը շատերը համաձայնեցին իրենց տպավորությունը հայտնել իմ ձայնագրիչին: Ահա մի քանիսը. մի բժիշկ-հոգեբան ասաց, թե «Տրավիատայի» 20 բեմադրություններ եմ տեսել, բայց կուրտիզանուհու նման կերպար առաջին անգամ է ինձ հանդիպում»: Մի իրավաբանի կարծիքով, Հասմիկի Վիոլետան հետաքրքիր եւ թարմ է, եւ գրավում է «սովորական» իտալական ձայնից տարբեր՝ հրաշալի, մաքուր, գրագետ, ուրիշ մի «մենթալիտետի» ձգողականությամբ: Շքեղ թավիշ հագած մի օպերասեր, ինչպես ներկայացավ մասնագիտությամբ, մեր հարցուփորձի ընթացքում սկսեց մտաբերել Մարիա Կալլասին: Երբ հարցրի, թե Հասմիկ Պապյանը նրա՞ն է հիշեցնում, ասաց. «Ո՞չ: Կալլասն ուրի՞շ է: Բայց... ինձ համար դժվար է արժեքներն իրար հետ բաղդատել»: «Թուրքերը գերմանացիներին նվերներ շատ են մատուցում, ասաց գերմանացիների մի խմբի հետ ինձ ընդառաջ եկած Միհրան Դաբաղը: Ես ասում եմ՝ կարող եմ միայն հայոց ասպերը ձեզ հրամցնել»: Պրն Դաբաղին ընկերակցած գերմանացիները, կարելի է ասել, անգիր գիտեն Հասմիկ Պապյանի խաղացանկը. ուրեմն ավելորդ է խոսել այն հպարտության մասին, որ ունենում ես ներկայանալիս՝ «Հայ լրագրող եմ»:

Շքեղ ձեւավորում, թանկարժեք հագուստներ, տարբեր երկրների թատրոններից հրավիրված հրաշալի ձայներ, օպերա հարգող հանդիսատես... եւ երեք ներկայացում՝ սեպտեմբերի 23, 26 եւ 29-ին:

Վերջում հավելեմ հենց առաջին գործողությունից մեջս տրփող մի «անհանգստություն»՝ հազար ափսոս, որ օպերայի սիրահար, բարձրամակարդակ ներկայացումների արժանի հայ հանդիսատեսը զրկված է թատերական նման հրավառություններից:

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Դյուսելդորֆ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

## Բազմաբնույթ հանդես

Լույս է տեսել հայրենակցական միությունների խորհրդի «Բնօրան» հանդեսի այս տարվա 1-2 միացյալ համարը: Հրատարակիչ խմբագիրն է Ժոզեֆ Ավետիսյանը, խմբագիրը՝ Գրիգոր Գույումջյանը: Հանդեսում ուշագրավ նյութեր կան Հայոց մեծ եղեռնի 83-ամյակի մասին, որ պատրաստել է Գրիգոր Գույումջյանը, ուշագրավ հրապարակումներ՝ նորաստեղծ հայրենակցական միությունների ստեղծման, հների գործունեության ու պատմության մասին: Հատկապես ուշադրության արժանի են պատմագիտության թեկնածու Հակոբ Սիմոնյանի «Քարվաճառի հուշարձանները», բանասիրական գիտությունների թեկնածու Վահան Մաղալյանի «Պատմական Թռեղի անցյալն ու ներկան», նույնպես բանասիրության թեկնածու Դիաննա Համբարձումյանի «Ազգայինն ու համազգայինը Ուիլյամ Ֆոլքների եւ Հրանտ Մաթեւոսյանի աշխարհայեցության համատեքստում» եւ այլ հոդվածներ: Ուշագրավ հրապարակումներով հանդես են եկել նաեւ արվեստագիտության թեկնածու Լիլիթ Գրիգորյանը, բանասիրության դոկտոր Վերժինե Սվազլյանը, Ահարոն Սափսըզյանը, Կլարա Թերզյանը, Գրիգոր Ջանիկյանը եւ ուրիշներ:

Հանդեսը հարուստ է արխիվային նյութերով, հազվագյուտ լուսանկարներով, բազմաբնույթ անդրադարձներով: Սիրով երաշխավորում ենք ընթերցողին:

Ռ. Հ.

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## Իրանահայ գրողը Երեւանում

Գրողների տան «Գրական հինգշաբթու» հյուրն էր իրանահայ արձակագիր Ռուբեն Հովհաննիսյանը (Ռուբեն Բէն), գրական մականունը նրան տվել է Հրանտ Ֆարյանը՝ արձակագիր, «Նոր էջ» հանդեսի հիմնադիր: Գրողների միության քարտուղար Աբգար Ափինյանը ներկայացրեց արձակագիր Ռուբեն Հովհաննիսյանին եւ նրա «Ամէն... Կերեք... եւ այլ գրվածքներ» «Նոր էջ» հրատարակչության կողմից տրված գիրքը, որի շնորհանդեսն էր: Այնուհետեւ Աբգար Ափինյանը հատվածներ ընթերցեց նրա լավագույն պատմվածքներից ու առանձնահատուկ գնահատականներ տվեց նրա ստեղծագործություններին: Շաւե Ամիրյանը, Ռաֆայել Հայրապետյանը եւ Հռիփսիմեն հյուրերին ներկայացրին «Նոր էջ» հանդեսի անդամ եւ խմբագիր Ռաֆայել Հովհաննիսյանին՝ նշելով, որ նա կարեւոր դեր է կատարել՝ իրանահայությանը միշտ տեղյակ պահելով հայ գրականության նոր անունների ու նոր ստեղծագործությունների տարածման հարցում:

Մենակ, դառը, ընդոստ, այս երեք բառերով բնորոշեց իրանահայ Ռուբեն Հովհաննիսյանին նրա մտերիմ ընկերը՝ Նորարար փորձարարական արվեստի կենտրոնի համահիմնադիր եւ համանախագահ, ճարտարապետ-ուրբանիստ Էդուարդ Բալասանյանը: Վերջում արձակագիրը շնորհակալություն հայտնեց շնորհանդեսի կազմակերպիչներին եւ նշեց, որ միշտ աշխատել է եւ աշխատում է հայ գրականությունն ամեն կերպ մոտեցնել պարսկահայ համայնքին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

# Մարզական

ԾԱՆՐԱՄԱՐՏ

## Դյուցազնի ռեկորդային արդյունքը

Երեւանի կրկեսի ասպարեզում անցկացվեց ծանրամարտի Հայաստանի գավաթի խաղարկությունը: Մարզածեւի հանրապետական ֆեդերացիայի հրավերով այս կարեւոր մրցումներում հանդես եկան մեր 40 ուժեղագույն ծանրորդները:

Ասենք, որ գավաթի մրցումներում հաշվարկը յուրահատուկ է, այն անցկացվում է նշանավոր մասնագետ Ստեփանոս Ուրարտուի առաջարկած գործակիցների աղյուսակով: Հաշվի են առնվում ծանրորդի քաշային կարգը, առանձին մրցաձեւերում նրա ցույց տված արդյունքները: Սովորաբար նման մրցաշարերում հաղթող են դառնում ցածր քաշային կարգերի ներկայացուցիչները: Սակայն հանրապետության գավաթի խաղարկությունն այլ կերպ ավարտվեց:

Գայլուն ելույթ ունեցավ գերծանր քաշային Աշոտ Դանիելյանը: Նա նախ Հայաստանի ռեկորդ սահմանեց պոկում վարժությունում՝ «սանձելով» 200 կիլոգրամանոց ծանրածողը: Ապա երիտասարդ մարզիկն աչի ընկավ հրում վարժությունում: Սկզբում նա բարձրացրեց 232,5 կիլոգրամ կշռող ծանրությունը, ապա եւս 10 կգ ավելացրեց դրան: Մասնագետների եւ մարզասերների ողջունող կանչերի տակ նա պահեց այդ հսկայական ծանրությունը: Դրանով իսկ Աշոտը նաեւ երկամարտում ռեկորդ սահմանեց՝ չորրորդը մի օրվա ընթացքում: Այսուհետ այն 442,5 կգ է: Իրոք գրոսմայստերական արդյունք է: Հիշեցնենք, որ վերջերս անցկացված Ռուսաստանի առաջնությունում օլիմպիական խաղերի եւ աշխարհի չեմպիոն Անդրեյ Չեմերկինը երկամարտում ցույց տվեց 427,5 կգ (190+237,5): Հուսանք, որ աշխարհի առաջնությունում հայ դյուցազնը չեմպիոնի կոչման համար պայքար կմղի Չեմերկինի եւ մյուս հավակնորդների հետ:

Դանիելյանը հավաքեց 441 միավոր եւ նվաճեց Հայաստանի գավաթը: Երկրորդ տեղը 338 միավորով գրավեց գյումրեցի ծանաչված մարզիկ Խաչատուր Քափանակցյանը: 77 կգ քաշային ծանրորդը երկամարտում ցույց տվեց 360 կգ արդյունք: Հետաքրքիր է, որ գավաթի հաշվարկում 3-րդ տեղը գրավեց նույն քաշային կարգում հանդես եկող մարզիկը: Դա երեւանցի Արսեն Մելիքյանն է, որը ցույց տվեց 345 կգ արդյունք եւ վաստակեց 315 միավոր:

Հանրապետության գավաթի խաղարկության ավարտից հետո զրուցեցինք ՀՀ սպորտվարչության առաջատար մասնագետ Փաշիկ Ալավերդյանի հետ: Նա գոհ էր մրցումների արդյունքներից: Պրն Ալավերդյանի կարծիքով, գավաթի խաղարկությունը ծառայեց իր նպատակին. այն է՝ ոչ միայն ի հայտ բերեց ուժեղագույններին, այլեւ ցույց տվեց միջազգային կարեւորագույն մրցումների պատրաստվող մարզիկների հնարավորությունները: Իսկ մեր ծանրորդներին առաջիկայում չափազանց պատասխանատու մրցումներ են սպասում: Երիտասարդները հանդես կգան Եվրոպայի առաջնությունում (Սոֆիա, հոկտեմբերի 5-11), իսկ մեծահասակները՝ աշխարհի առաջնությունում (Լախտի, նոյեմբերի 6-15):

ՇԱԽՄԱՏ

## Համահայկական խաղերի ծրագրով

Իրանի «Արարատ» միության կազմակերպած համահայկական խաղերի ծրագրով անցկացված շախմատի մրցաշարում հանդես եկան Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Իրանի ներկայացուցիչները:

Հայաստանի շախմատիստներն արդեն երրորդ անգամ էին մասնակցում նմանօրինակ մրցումների: Թիմի կազմում ընդգրկված էին միջազգային վարպետ, հանրապետության բազմակի չեմպիոն էդուարդ Մնացականյանը, վարպետ Գագիկ Հակոբյանը, Ալբերտ Օդյանը, Արման Հայրապետյանը, Լեւոն Խալիկյանը: Ավագների խմբում, որտեղ ընդգրկված էին մեր շախմատիստները, հանդես եկան 45 մասնակիցներ: Մրցաշարն անցկացվեց շվեյցարական մրցակարգով, 7 տուրով:

Առաջին-երկրորդ տեղերը 6-ական միավորով բաժանեցին Գ. Հակոբյանը եւ Ա. Հայրապետյանը: Մրցումների հաղթող ճանաչվեց Հակոբյանը, որն ավելի բարձր ցուցանիշներ ուներ ըստ գործակիցների աղյուսակի: Հայրապետյանին շնորհվեց 2-րդ մրցանակը: Հաղթողներից ընդամենը կես միավորով ետ մնաց իրանահայ շախմատիստ Համլետ Թումանյանը, որը 3-րդ մրցանակակիր դարձավ: 5-ական միավորով 4-7-րդ տեղերը բաժանեցին է. Մնացականյանը, Ա. Օդյանը, Մ. Բաղդասարյանը եւ Գ. Պետրոսյանը: Այս երկու շախմատիստները ներկայացնում են Արցախը:

ԹԵԹԵՎ ԱՏԼԵՏԻԿԱ

## Ուժեղագույնների մասնակցությամբ

Այսօր Արտաշատի խաղաքաղաքում կսկսվի թեթեւ atլետիկայի Հայաստանի հերթական առաջնությունը: Եռօրյա մրցումների ժամանակ մրցապարեզ կելնեն հանրապետության բոլոր մարզերի, խաղաքաղաքների ներկայացուցիչները: Չափազանց հարուստ է առաջնության ծրագիրը. մասնակիցները հանդես կգան 40 մրցաձեւում:

Ուրախությամբ պետք է նշել, որ այս առաջնությանը կմասնակցեն հանրապետության բոլոր ուժեղագույն թեթեւատլետները՝ Եվրոպայի գավաթի խաղարկության մրցումների հաղթող Արմեն Մարտիրոսյանը, Շիրակ Պողոսյանը, Մերուժան Սարգսյանը, Մարաս Սարգսյանը, Կարեն Քարամյանը, Անդրա Թորոսյանը, Տաթյանա Հովհաննիսյանը:

ՀՈԿԵՅ

## Բուրեն որակազրկվեց, իսկ Կոյվուն նոր պայմանագիր է կնքում

Հոկեյի ազգային լիգայի (NHL) մասնակից «Վանկուվեր Կենակս» թիմի ղեկավարների համբերությունը հատեց: Ակումբի նախագահ եւ գլխավոր մենեջեր Բրայան Բյորկը հայտարարել է թիմի առաջատար հարձակվող Պավել Բուրեին որակազրկելու մասին: «Ռուսական հրթիռ» Բուրեն չի ցանկանում այլեւս հանդես գալ Վանկուվերում եւ դիմել էր ակումբի ղեկավարությանը՝ այլ թիմի հետ փոխանակություն կատարելու խնդրանքով: Սակայն ճանի որ հարմար տարբերակ չկար, «Կենակսի» ղեկավարները որոշել էին, որ հոկեյիստը պետք է մնա նույն թիմում: Բուրեն գործադուլ հայտարարեց եւ «Կենակսի» մարզական ծամբար չներկայացավ: Նա վերջին ամիսներին Մոսկվայում է, մարզվում է ԲԿՄԱ-ի մարզադալահում: Բյորկը հայտարարել է, որ Բուրեի պրոբլեմը լուծված է, նրա հայտարարած գործադուլի հարցն այլեւս չի քննարկվի, իսկ իր թիմը պատրաստ է առանց նրա անցկացնել առաջիկա առաջնությունը: Այդ որակազրկումից հետո Բուրեն փաստորեն կորցնում է տարեկան մի քանի միլիոն դոլար բերող պայմանագիրը:

Հետաքրքիր է նշել, որ մինչ այդ որակազրկվել էր նաեւ մեկ այլ հանրահայտ հոկեյիստ՝ «Ֆենիքս» թիմի խաղացող Քեյշ Տկաչուկը:

Կարելի է ասել, որ «Մոնրեալ Կանադիենս» թիմի կենտրոնական հարձակվող Սակկո Կոյվուի բախտը բերեց: Ակումբի ղեկավարությունը վերջապես համաձայնեց ֆինն հոկեյիստի պահանջները բավարարել: Նոր պայմանագիր է կնքվել, համաձայն որի մարզիկը տարեկան 3 մլն դոլար կստանա: Պայմանագիրը 2 տարով է: «Մոնրեալ Կանադիենսը» անհամբերությամբ է սպասում Կոյվուի վերադարձին: Չէ՞ որ մինչ նա գործադուլ էր անում, թիմը սուզողական խաղում «Ֆիլադելֆիա Ֆլայերզից» ջախջախիչ պարտություն կրեց 1-7 հաշվով:

ՀԵՅԱՆՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ

## Առաջատարը կրկին Աբրահամ Օլանոն է

ՍՈՍԻՆ-ԱՐՍԵՆՅԱՆ

Իսպանիայում անցկացվող բազմօրյա խճուղային հեծանվավազքում «Վուելտայում» առաջատարի դեղին մարզաշապիկը կրկին կրում է իսպանացի Աբրահամ Օլանոն («Բանեստոն»): Երկրորդ տեղում է ընթանում ֆրանսիացի Լորան Ժելաբերը, որը ետ է մնում 22 վայրկյանով:

17-րդ փուլում հաղթողին որոշեց լուսաֆինիշը, այն առաջինը ճանաչեց գերմանացի Մարսել Վուստին: Հաղթողը եւ մրցանակակիրները 188,5 կմ մրցաշարածությունն անցան 4 ժամ 55 րոպե 33 վայրկյանում:

Հաջորդ՝ 18-րդ փուլում այլի ընկավ հեծանվավազքի ամենահակիրճ մասնակից ճանաչված Ֆաբրիցիո Գուիդին: Իտալացի հեծանվորդը 223 կմ դժվարին տարածությունը հաղթահարեց 5 ժամ 59 րոպե 40 վայրկյանում:

«Վուելտայի» ավարտին 4 փուլ է մնացել:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

## Ֆուտբոլի խաղադաշտերում

### Դասաեւի հրաժեշտի խաղը

Մոսկվայի «Դինամո» մարզադաշտում տեղի ունեցավ նշանավոր դարպասապահ Ռինատ Դասաեւի հրաժեշտի խաղը: Հանդիպեցին Ռուսաստանի ակումբների եւ 80-ականների սկզբի ԽՍՀՄ-ի հավաքականները: Վերջինիս կազմում հանդես եկան այնպիսի ճանաչված ֆուտբոլիստներ, ինչպիսիք են Օլեգ Բլոխինը, Ֆյոդոր Չերենկովը, Ալեքսեյ Միխայլիչենկոն, Ալեքսանդր Զավարովը, Իգոր Բելանովը, Յուրի Գավրիլովը, Ալեքսանդր Չիվադզեն, Լեոնիդ Բուրյակը, Խորեն Հովհաննիսյանը... Նրանց երիտասարդ մրցակիցներն, իհարկե, վեստերաններին գերազանցում էին արագությամբ, ինչը եւ վճռորոշ եղավ: Նման խաղերում սովորաբար մարզական կողմը եսին պլան է մղվում, սակայն այս անգամ ակումբների հավաքականի երիտասարդ ֆուտբոլիստները մարտականորեն էին տրամադրված: Վերեսենինիկովը, Կանիշեւը եւ Բուգնիկինը 3 գոլ խփեցին Դասաեւի պաշտպանած դարպասը, որից հետո, 35-րդ րոպեին հորելյարն իր տեղը զիջեց Վիկտոր Չանովին: Երկրորդ խաղակեսում վետերանները կարողացան կրճատել հաշվի տարբերությունը: 11 մետրանոց տուգանային հարվածով Բելանովը խփեց միակ պատասխան գոլը, եւ խաղն ավարտվեց 3-1 հաշվով:

Նախկին ԽՍՀՄ հավաքականի եւ նրա դարպասապահ Ռինատ Դասաեւի խաղին ականատես կլինեն Ռուսաստանի նաեւ ուրիշ քաղաքներում: Առաջիկայում հավաքականը հանդես կգա Աստրախան քաղաքում, որտեղ իր մարզական կարիերան է սկսել ճանաչված դարպասապահը:

### Ստուգողական հանդիպումներ

Եվրոպայի առաջնության ընտրական 4-րդ խմբում մեր թիմի մրցակից Ռուսաստանի հավաքականը ստուգողական հանդիպում անցկացրեց Իսպանիայի հավաքականի հետ: Սա Իսպանիայի հավաքականի նոր ավագ մարզիչ Խոսե Անտոնիո Կամաչոյի նորամուտն էր: 43-ամյա մասնագետը, որը վերջերս փոխարինեց Խավիեր Կլեմենտեին, խաղից առաջ հայտարարել էր, որ իր առաջնահերթ խնդիրն է համարում ֆուտբոլիստների բարոյական եւ մարտական ոգին բարձրացնելը եւ մոտ ժամանակներս կազմում լուրջ փոփոխություններ կատարելը: Նա չէր նշել, թե ինչ փոփոխություններ պետք է կատարի, սակայն այդ հարցին որոշ չափով պատասխանեց Ռուսաստանի թիմի հետ հանդիպումը:

Գրանադայի «Լոս Կարմենոս» մարզադաշտում անցկացված խաղն ընթացավ մոտավորապես հավասար պայքարում: Ռուսների գրոհներից մեկի ժամանակ, 26-րդ րոպեն իսպանացի պաշտպան Սերխիո Բարխուան իր դարպասի մոտ ձեռով խաղաց, ինչի համար մարտկացի մրցավար Սայիդ Բելկոլան (նա հայտնի դարձավ Ֆրանսիա-98-ի ժամանակ) եւ 11 մետրանոց տուգանային հարված նշանակեց, եւ խաղադաշտից հեռացրեց Բարխուային: Սակայն Ալեքսանդր Մոստովոյը չկարողացավ իրացնել 11 մետրանոց տուգանայինը: Իսպանիայի հավաքականի դարպասապահը գնդակը ետ մղեց: Խաղի 39-րդ րոպեին դաշտի տերերն օգտվեցին Ռուսաստանի թիմի պաշտպան Վալերի Մինկոյի սխալից եւ բացեցին հաշիվը: Գոլը խփեց Բետոր Ալխիան: Դա հանդիպման միակ գոլը եղավ, եւ իսպանացիները կարողացան 10 հոգով դիմագրավել մրցակցին ու հաղթել՝ 1-0: Խաղը բավականին նյարդային ստացվեց, շատ էին խախտումները, եւ Բելկոլան, մեկ կարմիր քարտից բացի, նաեւ 9 դեղին քարտ ցույց տվեց երկու թիմերի ֆուտբոլիստներին: Նշենք, որ Ռուսաստանի հավաքականն այս խաղում չկարողացավ իր ուժեղագույն կազմով հանդես գալ: Մոսկվայի «Սպարտակի» ղեկավարությունն այդպես էլ բաց չթողեց իր երեք խաղացողներին:

Ստուգողական խաղ անցկացրեցին նաեւ Բրազիլիայի եւ Հարավսլավիայի հավաքականները: Դաշտի տերերի՝ աշխարհի քառակի չեմպիոն բրազիլացիների կազմը բավականին թարմացված էր: հանդես եկան Ֆրանսիայում կայացած աշխարհի առաջնության ընդամենը 3 մասնակիցներ:

Հաշիվը 6-րդ րոպեին բացեց հարավսլավացի Սավա Միլոշեւիչը: 11 րոպե անց բրազիլացի Մարսելինո Կարեոկան վերականգնեց հավասարակշռությունը: Հետագայում կողմերը ջանքեր թափեցին առավելության հասնելու համար, սակայն հանդիպումն այդպես էլ 1-1 հաշվով ավարտվեց:

### Ընկերական հանդիպում Նիվելի օգտին

Քյոլն քաղաքում անցկացվեց Գերմանիայի եւ Ֆրանսիայի վետերան ֆուտբոլիստների հավաքականների մրցախաղ, որից ստացված ողջ շահույթը տրամադրվեց Ֆրանսիացի ժանդարմ Դանիել Նիվելին: Հիշեցնենք, որ նա տուժել է աշխարհի առաջնության ժամանակ, մի խումբ գերմանացի «ֆուտբոլասերների» հետ ընդհարումից հետո: Այժմ էլ Նիվելի առողջական վիճակը վատ է: Ասենք, որ այսպիսի հանդիպում նախատեսվում էր անցկացնել վաղուց, նույնիսկ աշխարհի առաջնության օրերին, սակայն ամեն անգամ հետաձգվում էր: Երկու թիմերի կազմերում խաղադաշտ մտան անցյալում հայտնի ֆուտբոլիստներ, մասնավորապես՝ Ռուդի Ֆյոլլերը, Հորսթ Հրուբեշը, Մանֆրեդ Կալցը (Գերմանիա), Մարիուս Տրեզորը, Պասկալ Ալմեսան, Բազիլ Բոլին (Ֆրանսիա): Վետերանները արդյունավետ խաղ ցուցադրեցին: գնդակը 9 անգամ հայտնվեց թիմերի դարպասներում: 5-4 հաշվով հաղթեցին գերմանացի ֆուտբոլիստները:

«Ֆուտբոլ առանց բռնության» նշանաբանով անցկացված խաղի ընդմիջմանը տոմսերի վաճառից եւ նվիրատվություններից գոյացած ողջ գումարը՝ 1 մլն մարկ, հանձնվեց Նիվելին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Օրվա հետքով

ՏՆՏԵՍԱԿԱՆ

## Ինչո՞ւ են գերմանացի ներդրողները, մասնավորապես բանկերը, պասիվ Հայաստանում

*Ըստ ՀՀ-ում ԳԴՀ դեսպանի, այդ հարցի պատասխանը առաջին հերթին ՀՀ կառավարությունը պետք է տա*

ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Կարլա Սյուլլեր-Հոլթեմփերին սեպտեմբերի 24-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում «Տնտեսական զարգացումը Արևելյան Գերմանիայում» թեմայով զեկուցումից հետո տրված այս հարցի պատասխանը իրատեսական էր. «Ցանկացած ներդրում անող ֆիրմա կամ բանկ ինքն է որոշումներ կայացնում՝ հիմնվելով զուտ տնտեսական նկատառումների վրա: Այս բնագավառում չկան ինստիտուցիոնալ խոչընդոտներ, ընդհակառակը, մենք ստեղծել ենք մեխանիզմներ, որոնք խթանում են գերմանական ներդրումները Կենտրոնական, Արևելյան Եվրոպայում եւ ԱՊՀ երկրներում»: Ըստ տիկին Սյուլլեր-Հոլթեմփերի, միգուցե այլ հարց է, որ այդ խթանները չեն ավելացել, վարկերի երաշխիքները նույնպես, սակայն, այդ հարցը պետք է ուղղվի Հայաստանի կառավարությանը, որը պետք է որոշ այլեր ձեռնարկի ու ամեն ինչ անի արտասահմանյան ներդնողներ գրավելու համար հարկային դաշտի բարելավման, այլ խթանների, ինչպես նաեւ ներդրումների բարենպաստ կլիմայի համար պետական մեխանիզմների ստեղծման առումով: Ըստ տիկին դեսպանի, եթե Արեւմտյան Գերմանիայի ներդնողները հաղաղում են փողեր ներդնել Գերմանիայի արեւելյան հողերում, որտեղ, բնականաբար, պայմաններն ավելի բարենպաստ են, ապա Հայաստանի առնչությամբ՝ առավել եւս, թեեւ, ինչպես չժխտեց դեսպանը, այստեղի կառավարությունն անում է ամեն ինչ համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծելու առումով:

Ինչ վերաբերում է Գերմանիայի արեւմտյան կողմից արեւելյան մասում ներդրումների մասին վիճակագրությանը, ապա դա այնքան էլ ոգեւորիչ չէ: Ներդրումների ածը միջին հաշվով տարեկան կազմում է մոտ 8 տոկոս: 1993 թ.-ից նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ձեռնարկություններում ներդրումները հասնում են մինչեւ 500 մլն գերմանական մարկի: Բնականաբար դաշնային կառավարության ներդրումների ծավալները անհամեմատ մեծ են. ընդհանուր առմամբ ԳԴՀ կառավարության կողմից արեւելյան հողերում կատարվել են մոտ մեկ տրիլիոն մարկի ներդրումներ՝ ենթակառուցվածքների ձեւավորման, տրանսպորտի, շինարարության եւ այլ ոլորտներում:

Տիկին դեսպանը, պատասխանելով Գերմանիայում հայ փախստականների մասին հարցին, բերեց մի հետաքրքիր տվյալ: Ներկայումս Գերմանիայի քաղաքացիություն ստանալու խնդրանքով, Հայաստանում քաղաքական հետապնդումների պատճառաբանությամբ ԳԴՀ համապատասխան մարմիններին դիմած ՀՀ քաղաքացիների դիմումներից միայն կես տոկոսին (դեռ մի փոքր էլ պակասին) է դրական պատասխան տրվում: ԳԴՀ դեսպանը շեշտեց, որ ՀՀ քաղաքացիներից ստացված յուրաքանչյուր դիմում առանձին քննության է ենթարկվում:

ՎԱՅՏՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

## Ստանավորեցվեց «Հիդրոպարտներ գործարան» ՓԲԸ-ն

ԵՐԵՎԱՆ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սեպտեմբերի 25-ին ՀՀ սեփականաշնորհման նախարարությունը կհայտնի իր եզրակացությունը սեպտեմբերի 16-ին մրցույթային վաճառքի ներկայացված «Հիդրոպարտներ գործարան» փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման մասին:

Ինչպես ասացին նախարարությունում, ՀՀ կառավարությունը գործարանի համար սահմանել է նվազագույն արժեք՝ 66 մլն 310 հազար դրամ: Գործարանը մասնավորեցնելու ցանկություն են հայտնել միաժամանակ երկու գնորդ, որոնց բիզնես-ծրագրերը հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են: Առաջնությունը տրվել է լավագույնին՝ նկատի ունենալով աշխատատեղերի քանակը, աշխատավարձը եւ սպասվելիք ներդրումները:


ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**"Предприятия и организации Армении" N 1/98 տեղեկագիրքը կարելի է ձեռք բերել Երեւանի կենտրոնում գտնվող կրպակներից, գրախանութներից կամ «Սփյուռի» գրասենյակից:**

*Փ. Բուզանդի 1/3, 7 հարկ*
*Հեռ. 58-13-51, 58-91-67*

**Junior Achievement of Armenia**

has a vacancy for Deputy Director's position. Fluent English and some economic background is required.

*Address: 39 Abovyan, # 21, Yerevan, Armenia*
*Tel: 52 08 37, 56 67 50*
*AT&T 151 652*

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

առանձնատուն, 80 քառ. մ. նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի: Զանգահարել 27-22-57 *ժամը 10-16*, 58-33-26 *ժամը 18-23*


ՄՐՑԱՊԱՏԵՍ

## Հայկական կոնյակը ֆրանսիական բրենդի տարատեսակ

Գյուղատնտեսության նախարարության բարձրաստիճան մի պաշտոնյա, մեկնաբանելով «Պեռնո Ռիկար» ընկերության առաջին քայլերը Երեւանի կոնյակի գործարանում, բավական կտրուկ գնահատական տվեց. «Կոնյակի գործարանը կարելի էր վաճառել յուրաքանչյուրին, ընդ որում գնից անկախ, բացի ֆրանսիացիներից, որովհետեւ ֆրանսիացիներն իրենք կոնյակ արտադրողներ են: Բարձրաստիճան այս պաշտոնյան փաստեց, որ հատկապես «Պեռնո Ռիկար» ընկերության նախագահ Թիերի Ժաֆիայի գործնական այցից հետո նկատվում է, որ ֆրանսիական տնտեսությունը խաղողի իրենց տեսակներն է պատրաստվում տեղափոխել Հայաստան»: Այս նպատակով Գյուղատնտեսական արտադրանքի եւ տեխնոլոգիաների փոխանակման ֆրանսիական «ADEPTA» ասոցիացիայի կողմից երկու ընկերությունների ղեկավարներ ժամանել են Հայաստան, նրանք ուսումնասիրում են բնակլիմայական մեր պայմաններում ֆրանսիական կոնյակի հիմք հանդիսացող տնկիները տարածելու հնարավորությունները, թեեւ այդ տնկիները նվազ գրգռիմացկուն են, քան հայաստանյան խաղողի տեսակները: Ընդ որում, Երեւանի բրենդիի գործարանը գյուղացիներից գնում է հայկական կոնյակի հիմք հանդիսացող ավանդական խաղողի ոչ բոլոր տեսակները, որոնք խաղողի տեսակներ խոտանվում են: Գյուղնախարարությունից հայտնեցին նաեւ, որ խաղողի իրենց տեսակներից բացի, ֆրանսիական կոնյակագործները մտադիր են ներդնել սեփական տեխնոլոգիաներ: Թիերի Ժաֆիան, հանդիպելով նախագահ Ռոբերտ Քոչարյանին, նշել էր, որ կոնյակի ստացման տեխնոլոգիան, թորումից մինչեւ վերջնական փուլ, կատարելագործման եւ որակի բարձրացման կարիք ունի: Արդյունքում «Պեռնո Ռիկարը» կարող է ստանալ իրոք բարձրորակ եւ նրբահամ ոգելից ըմպելիք, բայց դա չի լինի հայկական կոնյակ, այլ, ինչպես ձեւակերպեց գյուղնախարարության բարձրաստիճան այս պաշտոնյան՝ «ֆրանսիական կոնյակի տարատեսակ»:

Գյուղնախարարությունում տեղեկացրին նաեւ, որ սեպտեմբերի 23-ի դրությամբ՝ պաշտոնական տվյալներով մթերվել է 2 հազար 200 տոննա խաղող, որի միջին գինը 107,5 դրամ է՝ 1 կգ-ի համար: Թիերի Ժաֆիան Ռոբերտ Քոչարյանին հավաստիացրել էր, թե արդեն 3 մլն դոլար է ծախսվել խաղողի մթերումների համար: 2 հազար 200 տոննայի դեպքում անհնար է ծախսել հիշյալ գումարը:

«Ազգն» անդրադարձել է գյուղնախարարության մշակած «Կոնյակ» ծրագրին, գյուղնախարարությունում հավաստիացրին, որ արդեն սկսվել է այս ծրագրի վերանայման աշխատանքը, եւ իրենք մտադիր են զարգացնել հայկական կոնյակագործությունը մնացյալ գործարաններում: Կարծում ենք՝ սա առողջ մրցակցություն կառաջացնի ֆրանսիացի եւ հայ կոնյակագործների միջեւ, ինչից կշահեն ե՛ւ պետությունը, ե՛ւ սպառողները:

Ն. ԳԻԼԲԱՐՅԱՆ

## «ՄԵՆՈՒԱ» հայաստանյան երթուղիներ
## Առաջին անգամ Երեւանում

(Սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 7-ի ծրագիր)

| | | Մեկնում Արմենիա-1 | Մեկնում Անի | Մեկնում Դվին | Ճանապարհություն |
|---|---|---|---|---|---|
| Ամեն օր | Գառնի եւ Գեղարդ | 10:00 | 10:15 | 10:30 | - Տեւողությունը 3-4 ժամ<br>- Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ |
| | Սեւան | 10:00 | 10:15 | 10:30 | - Տեւողությունը 3-4 ժամ<br>- Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ |
| | Խոր Վիրապ | 10:00 | 10:15 | 10:30 | - Տեւողությունը 3-4 ժամ<br>- Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ |
| | Ս. Էջմիածին, Ս. Գայանե, Զվարթնոց | 10:00 | 10:15 | 10:30 | - Տեւողությունը 3-4 ժամ<br>- Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ |
| | Շրջագայություն Երեւանի քաղաքում | 17:00 | 17:05 | 17:15 | - Տեւողությունը 1 ժամ<br>- Ուղեվարձը $5-ին համարժեք դրամ |
| **Արտակարգ ծրագրեր** | | | | | |
| Ուրբաթ սեպտ. 25 | Եղեգնաձոր Նորավանք, Ջերմուկ | 8:00 | 8:15 | 8:30 | - Տեւողությունը 10 ժամ<br>- Ուղեվարձը $15-ին համարժեք դրամ |
| Շաբաթ սեպտ. 26 | Համերգ Կամերային նվագախումբ | 18:30 | 18:35 | 18:40 | - Ղեկավար՝ Արամ Ղարաբեկյան<br>- Ֆիլհարմոնիկի մեծ դահլիճ<br>- Ուղեվարձը $2-ին համարժեք դրամ + տոմսի արժեք |
| Երկուշաբթի սեպտ. 28 | Դիլիջան, Հաղարծին, Պարզ լիճ | 8:00 | 8:15 | 8:30 | - Տեւողությունը 10 ժամ<br>- Ուղեվարձը $15-ին համարժեք դրամ |
| Հինգշաբթի հոկտ. 1 | Տաթեւի վանք, Շաքեի ջրվեժ | 7:00 | 7:15 | 7:30 | - Տեւողությունը 11 ժամ<br>- Ուղեվարձը $15-ին համարժեք դրամ |
| Երկուշաբթի հոկտ. 5 | Հաղպատ, Սանահին | 7:00 | 7:15 | 7:30 | - Տեւողությունը 10 ժամ<br>- Ուղեվարձը $15-ին համարժեք դրամ |
| Չորեքշաբթի հոկտ. 7 | Բյուրական, Ամբերդ, Արագած | 17:00 | 17:05 | 17:15 | - Տեւողությունը 3-4 ժամ<br>- Ուղեվարձը $10-ին համարժեք դրամ |

- Տեղերը սահմանափակ են. զանգահարեք ամեն օր, ժամը 9-20-ը
- Բոլոր երթուղիներում անգլիախոս ուղեկցող, սառը ըմպելիք, հայկական երաժշտություն
- Նախօրոք պայմանավորվածությամբ այցելություն Տաթեւ, Ջերմուկ, Հաղպատ, Ղարաքաղ եւ այլն
- Մանուկների խնամք (child care)
- Գնումների օժանդակություն, անվճար գույք
- Հյուրանոցի առաքումով

Հեռախոս (37-42) 567246 - Ֆաքս (37-42) 567246 - e-mail: menua@hats.arminco.com
*Հասցե՝ Սայաթ Նովա 27, Երեւան, Հայաստան*

## ՀԵՌՈՒՏԱԾՐԱԳՐԵՐ

**25 սեպտեմբեր**

**ԵՐԿ**

17.00 Հայլուր
17.20 3-ոդ ալիք
18.00 Հեռուստասերիալ «Դալլաս»
19.00 Մայրամաղամ
20.00 Հայլուր
20.35 1 լուր
20.45 Հեռուստակասպորտ
20.50 Սեփականաշնորհումից հետո
21.00 3-ոդ ալիք
Գ/Ֆ «Ալեքի, հան կյանքը»
24.00 Հայլուր
00.15 Կեսգիշեր

**ՆՈՐՔ**

19.00 Լուրեր
19.15 Մուլտֆիլմ
19.25 ԱՐՏ-13. Հիթ շքերթ
19.45 Միասին (=Միր»)
20.30 «Սիաղեթ» (10-ոդ մաս)
21.00 Լուրեր
21.20 Լուս-ա-մութ
21.25 Ասողերը հուշում են
21.30 Ներշնչանք (գեղանկարիչ Սուրեն Չիբուխչյան)
21.55 Միրեցեք զմփեանս
22.00 ԱՐՏ-13. Ծանոթ-անծանոթը
22.30 «02» լրատու
23.00 Լուրեր
23.10 Արկածային էկրան. Գ/Ֆ «Ազաս անկում»

**ՌՏՆ**

19.05 Սամուլի սուրհանդակ
19.15 Մուլտեր
19.45 Մի անգամ
19.50 Չարլզ Բրոնսոնը «Սահ՝ ըստ կանոնների» ֆիլմում
(20.55 Սուրհանդակ)
22.00 Սամուլի սուրհանդակ
22.15 Հեռագրություն
22.55 Սուրհանդակ
23.15 Գ/Ֆ «Կորրա»
00.00 Արթուր Էլբակյանի հեղինակային «Ուրբաթ գիշեր բոլորին էլն չունեմ» ծրագիրը. Հանդիսավար՝ Գ/Ֆ: Էրոտիկ ֆիլմ
(00.55, 02.55 Սուրհանդակ)

**1**

7.00 Բարի լույս
10.00, 16.00, 19.00, 01.25 Նորություններ
10.15 Սերիալ «Ջեյն Էյր»
11.30-16.00 Բիզնես TV
16.20 Գ/Ֆ «Ընկիր հանդարտությունը»
18.00 Սեզամ փողոց
18.30 Ֆրուտիս ծեղնահարկ
19.20 «Ջեյն Էյր»
20.10 Առողջություն
20.45 «Հրաբխների դաշտ»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.40 Դետեկտիվ «Անհասկանալի ճգնաժամ»
00.40 Հայացք
01.40 Գ/Ֆ «Գիշերային այցելուներ»

**ՊՐՏ**

8.00 Բարի լույս, Ռուսաստան
10.45 Հերթապահ բաժանումներ
11.00 «Սանտա Բարբարա»
11.45 Սոդոմներ՝ փոսով
11.50 Առողջության աշխարհ
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր
12.35 Հեռուստասերիալ «Սարգո թագուհին»
13.50 Երկխոսություններ կենդանիների մասին
14.45 Առեւտրի տուն «Լե մոնդի»
15.35 Գ/Ֆ «Աղջրեի հետքը»
17.05 Մուլտֆիլմ «Անառակ թութակի վերադարձը»
17.15 «Զանգահարեք Կուզյային»
17.30 Սերիալ «Առաջին համբույրներ»
18.30 Աստղակ
19.00 Բոլորի շուրթերին
19.30 Հեռուստասերիալ «Մայրեր, կանայք եւ սիրուհիներ»
20.30 «Մարիինա ռոշա»
21.30 Մանրամասներ
21.45 «Աբեյազ եւ ընկ.»
22.45 Կինոյի ժամ. դետեկտիվ «Տաքը փոքրիկ նեգրեր» (1-ին, 2-ոդ սերիաներ)
01.30 Հերթապահ բաժանումներ
01.45 «Կ2»-ի կինոդահլիճը. Գ/Ֆ «Հեմնեթ» (ԱՄՆ)


«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) * տեղեկագրքերով * մագնիսական սկավառակներով * INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)


«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Երզնկայի 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատվեր 912 Տիրաժը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 24.09.1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@